

2001

ԿոՅՐ  
ԵՐԳՆՈՒՅԻՆ

82

17-30





82-2

7-30

160

G. H. R. DABBS, M. D.

# ԿՈՅՐ ԵՐԳՉՈՒՅԻՆ

ՌՈՍԱՆԴԻԲ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ  
Յ ԱՐԱՐՈՎ

Անգղիայից բարգմանեց  
Մ. Յ. ԲԱՐԹԻԿԵԱՆ, B. A.,  
Hon. Secretary  
British Empire Naturalist Association.



ԻԶՄԻՐ  
Տպագր. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1919





82  
30

GEORGE H. R. DABBS, M. D. C. T. 2009

«Նշար»

խոսք

# ԿՈՅՐ ԵՐԳՉՈՒՅԻՆ

(ՌՈՍԱՆԴԻԲ ՔԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ 3 ԱՐԱՐՈՎ)


ԱՆԳՆԻԵՐԵՆԷ ՔԱՐԿԱՆԵՑ

ՄԻՔԱՅԷԼ Յ. ԲԱՐՔԻՆԵԱՆ Գ. Ա.

(ՄԵՆԱՐ)



175



Ի Զ Մ Ի Ր

ՏՊԱԳՐ. ԽԱՐԵԿԵԱՆ



1914

21864



28 MAR 2013

2001

2001

Հայ քառերական քեֆի  
փառապաշտոններուն

ԲԱՐԳՍԱՆԻՉԷՆ





## ԲԱՌ ՄԸ՝ ԹԱՐԳՄԱՆԻՁԻՆ

Ազն. Բարեկամ,

Թարգմանութիւնդ նորութիւն մըն է ինքնին, եւ կ'արժէր գիշերներ սպառել Տր. Տէպսի նման շինիչ ու միանգամայն յանդուգն թատերագրի մը երկերէն քն սիրուածը **Կոյր Արզնուհի** հայացնելու համար:

Թերեւս անակնկալօրէն դուք եղած ըլլաք ամբողջ տարւան ընթացքին Հայ գրականութեան մասնաշարին մէջ թատերական կտոր մը գետնողը, եւ կամ գէթ Հայ թատերասէր հասարակութեան ու ըստին նոր կտոր մը հրամցնողը: Գիտէք թէ Ձեր թարգմանիչին գործը Օթերայի եւս վերածուած է, ու որքան կը յարմարի արդէն թարգմանութեանց անունը երաժշտութեան ոգւոյն հետ:

Լաւ ընտրած էք Ձեր կտորը, հոգ չէ թէ իր հեղինակը Հայերուն համար անծանօթ մէկը եղած ըլլայ:

Կը շնորհաւորեմ Ձեր աշխատութեանց առաջին երախայրիքը:

Եթէ թարգմանութիւնդ վէպ մը ըլլար, լոկ հանրութեան խափուսիկ մեծամասնութեան քննադատութեանը զոհացնող, եթէ ան արտադրութիւն մ'ըլլար միայն երիտասարդութեան կրակոտ բոցանքներուն յագարդ տուող, եթէ միայն մարդկութեան սուղ մէկ տարրը շօշափէր ան, ես պիտի ըսէի թէ չպիտի արժէր շահագրգռուիլ այդ նիւթով, նիւթդ սակայն ընդհանուր մարդկութեան կը պատկանի ու ոչ թէ ո'րեւէ մեծամասնութեան մը, դասակարգի մը եւ կամ ցեղի մը:

Շէյքսպիրի թատերգութեանց արժանիքը արդէն հոն կը կայանար, չէ որ Հայ մը երբէք չպիտի շահագրգռուէր Անգլիացի ժողովուրդին կեանքովը, եթէ Համլէթը եւ կամ Օթէլլոն Բրիտանական ցեղերու հետ միայն խօսէին:

Իսկ թէ Տր. Տէպսի գործը ընդունելութիւն պիտի գտնէ մեր մէջն ալ, այդ մեր հոյակոյրդութեան մակարդակէն կուտուի ունի:

Ես, միայն պիտի մաղթէի:

Անտարակոյս կ'ընդունիր շնորհաւորութիւններս ու թարգմանութեանդ յաջողութեան մասին իմ մաղթանքներս:

Բարեկամդ՝

Զմիւռնիա

Ռ. ՄԻՆԱՍԵԱՆ



## ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

«Կոյր Երզնուհին», Տր. Տէպսի ամենէն  
սիրուած երկերէն մին եղած, Անգղիական  
նշանաւոր բերթերէ գովուած եւ երեւելի քա-  
սերաքնման հիւրընկալուած ըլլալուն, հա-  
յերէնի վերածելով՝ Հայ քասերասէ հասա-  
րակութեան նիւթ մ'ընծայած ըլլալու գոհու-  
նակութիւնը կ'զգանք եւ յուսով ենք թէ՝  
Անգղիոյ մէջ արժանացած Ժողովրդականու-  
թիւնն ու համակրանքը Հայերու մէջ ալ վա-  
յելելու պատիւը կ'ունենայ:

Հոս պատճ կ'զգանք հրապարակաւ խորին  
շնորհակալութիւն յայտնել, մեր ազնիւ քա-  
րեկանին՝ Պ. Ռուբէն Յ. Միւսաւեանի որ սի-  
րայօժար յանձն առաւ քարգնանութեանս  
փորձերուն սրբապնդութիւնը:

20 Մարտ, 1914

ԹԱՐԳՄԱՆԻԶԸ

ՃԷՆԱՆԵԱՆ ԳՕԼԷՃ

ԳՈՂԵԱ



## Ա Ն Ձ Ի Ն Ք

ՏՐ. ԿԼՕՎԸՐ

(Բժիշկ ի Շեյֆոն, Անգլիա)

ՎԻՐ ԿԼՕՎԸՐ

" պրոֆ

ՓՐԻՆՍ ՔԻՐԻԱՆԻ

ՎԱՆՏՈՄ

ՃՕՐՃ ՔԼԱՌԻՍ (Տեղակալ՝ Աւսրիան. Ուսկրեն.)

ՀԷՐՔԻԻԼԷՍ ՊՐԷՆՏ (Տր. Կոմլորի ծառան):

ՄԱՐԲԻՋ ՔԱՐՐԱՄՊԱ

ԱՅՏԱ

(Տր. Կոմլորի ֆեռադիկը):


ԱՐԱՐ Ա.— Առաւօտեան սենեակ մը ի Շեյֆոն:

ԱՐԱՐ Բ.— Պանդոկատան մը ի Վիեննա:

ԱՐԱՐ Գ.— Պարսեղոնայ, Էւսրասա Մեփա փո-  
ղոցին վրայ սենեակ մը:

ԺԱՄԱՆԱԿ — 1875

ՏԵԻՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ԺԱՄ



ՍԵՆԵԱԿ մը՝ Տր. Կլովլորի տան մէջ, ի Շեյֆոն:  
ԺԱՄԱՆԱԿ — Յուլիոս: Փեղկաւոր պատահանները(1)  
ետեր: Դռներ՝ աջն ու ձախ: Դեղձանիկ վանդա-  
կով: Դաշնակ: Սենեակը կահաւոր լած է հան-  
գըստաւէտ կերպով և տառտ ծաղիկներով: Օր-  
ուան պահը — ԱՌՏՈՒ: Երբ վարագոյրը կը բաց-  
ուի ՀԷՐՔԻԼԷՍ ՊՐԷՆՏ ձախակողմեան դռնէն կը  
մտնէ վարդերու փունջով մը ձեռքը, զոր կը զի-  
տէ ախանաւոր գոհունակութիւնով. և յետոյ  
դաշնակին վրայ կը դնէ:

ՊՐԷՆՏ.— Հո՛գ չէ թէ ոսկից կուգան, պա-  
տենութիւն չի կայ հարցընելու թէ՛ ինչու եկած  
են: Ա՛հ, Պարո՛ն վիր, եթէ Այտան «սոյո» միայն  
ըսէ քեզի, դու ա՛մենաքաղցը կիներ պիտի ունե-  
նաս բոլոր Անգլիոյ մէջ: Թէև կոյր է:

(Խօսելու ոտնէն դեպի դաշնակի փաշեղով աջը):

Ներս կը մտնէ Տր. Կլովլոր, մագերթ անովկած  
մեկը, 60 տարեկանի մօտ:

ՏՐ. Կ.— (Սեղանին կողմը փաշելով): Ի՞նչ է,  
Պրէ՛նտ, ծաղիկփունջի՞նք կը չինես:



ՊՐԷՆՏ.— Չէ՛, տէ՛ր իմ, ես միայն բերողն եմ, չինողը երիտասարդ մըն է:

ՏՐ. Կ.— Որո՞ւ համար են:

ՊՐԷՆՏ.— Օրիորդ Այտայի՛ համար, տէ՛ր իմ:

ՏՐ. Կ.— Ո՞վ գրկեց:

ՊՐԷՆՏ.— Բայց, տէ՛ր, եթէ չեմ կրնար ըսել. սակայն կարծեմ երկուքնիս ալ գիտենք:

ՏՐ. Կ.— Պրէ՛նտ, լաւ չե՛ս ընելը զաղտնի պահելով. ո՞վ է ղրկողը:

ՊՐԷՆՏ.— Պր. Վի՛ր, կարծեմ, տէ՛ր իմ: (Վե-  
րապահութեամբ):

ՏՐ. Կ.— (Նեղացած): Ինչո՞ւ այդպէս կը կար-  
ծես:

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ տէ՛ր իմ, ո՞վ կրնար ծագիկ-  
նե՛ր ղրկել Օրիորդ Այտային, և ո՞վ, երկուքը մի-  
ատեղ տեսնելով, կրնայ կասկածիլ:

ՏՐ. Կ.— Կարելի է ճշմարիտ կը խօսիս—չո՛ւս  
նմոյսս պատրաստէ՛:

(Տր. Կրօվրի զեպի դաշնակ կը յառաջանայ):

ՊՐԷՆՏ.— Շա՛տ լաւ, տէ՛ր իմ: Ժողովրդապե-  
տը՝ Զմրան Ածխածողովին յատկացուած զրամի  
տուրքովը ղրկել է: Ձեր գրասենեակին է, տէ՛ր իմ:  
Երեսուն ոսկի: Ոսկեգրամ:

ՏՐ. Կ.— Անմիջապէս զրամարկղը կը դնեմ:

ՊՐԷՆՏ.— (Մէկուսի) Բարկացա՞ւ: Չ, կրնար  
բարկացած ըլլալ: Աղնի՛ւ տէր, արդեօք չա՞տ խօ-  
սեցայ: Բայց ինչո՞ւ արգելեց որ խօսիմ: Ե՛րբէ՛ք  
վտանգաւոր բան մը ըսած չէի: Բայց հիմայ,  
խե՛նդ, ահա՛ ինչ որ եմ: (Կր մեկնի Պրէ՛նտ):

ՏՐ. Կ.— (Ծաղիկները առնելով): Հի՛ն, հի՛ն զը-  
րույցը: Խեղճ Վ. ր: Ես զինք զգուշացնողներէ մին  
ըլլալու եմ: Այնքա՛ն չատ աշխատեցայ զանոնք  
իրարմէ հեռու պահել: Այնչափ կը վախճայի այդ

խե՛ղճ տղաք: (Ծաղիկները կրկին դաշնակի վրայ  
կը դնէ. և կը փաշտի): Կը մտնէ Վի՛ր յանկարծ  
պատուհանէն:

Վի՛ր.— Բարբի՛ լոյս, Սինե՛օր: Դուք ճի՛շդ,  
ճի՛շդ իմ տեսնել փափաքած անձ էք, միայն ե-  
րեակայեցէ՛ք, հոս տարօրինակ հանգամանք մը  
կայ, որդին՝ բո՛ւն իսկ իւր հօրը կը դիմէ կին մը  
խնդրելու: — Այտա և ես — Սինե՛օր, ի՛նչ կայ:

ՏՐ. Կ.— Լրջօրէ՛ն կը խօսիք:

Վի՛ր.— Ցարդ եղածէն աւելի: Բայց, լիրաւի,  
յիրաւի ասոր չէ՛ք կրնար ստարկութիւն մ'ունե-  
նալ: Ի՛նչ կը նշանակէ: Տե՛ս, հա՛յր իմ:

(Տր. Կրօվրի կը մօտենայ):

ՏՐ. Կ.— (Զախակողմ կ'անցնի և սեղանին  
աջ կողմը կը նստի): Լա՛ւ, զաւա՛կս, լա՛ւ և ինձի  
մօտիկ ըրէ՛: Հիմա չափահաս մարդ մըն ես, չատ  
չանցած բարձր գիրք մը պիտի գրաւես Արուես-  
տի աշխարհին մէջ: Կը փափաքիմ որ տարի մըն  
ալ ճամբորդես և յետոյ կրնաս այդ խնդիրը կրկնել:

Վի՛ր.— Բայց սիրելի Սինե՛օր, չեմ կրնար Այ-  
տան ձգել ամբողջ տարի մը:

ՏՐ. Կ.— (Նսած): Տղա՛ս, դո՛ւն և ես երբէք  
անհամաձայնութիւն մը չունեցանք մեր կեան-  
քին մէջ: Կարելի է, որովհետեւ մենք կասկած չի  
անուցինք իրարու հանդէպ և կամ մի՛շտ խորա-  
պէս դիտեցինք ճշմարտութիւնը: Կէտի մը յան-  
գեցանք երբ կասկածները կրնային մեր բարի  
հասկացողութիւնը խորտակել: Կ'ուզե՞ս որ խօսիմ:

Վի՛ր.— (Տր. ի աջ կողմը կենալով): Այո՛,  
կ'ուզեմ:

ՏՐ. Կ.— Բայց եթէ քեզի ըսեմ: Պէ՛տք չի  
կայ որ խօսիմ, եթէ տարի մը սպասես այս սի-  
րային խնդիրը կրկնելէ առաջ — Կեցի՛ր, մօտիկ  
ըրէ՛ — քեզմէ խնդրեմ աս ալ խորհիլ թէ՛ եթէ



քեզի խօսիմ, ըսածներուս խիստ պիտի տրտմիս:  
ՎԻՐ.— Դարձեալ կ'ըսեմ. խօսեցէ՛ք և բա-  
ցորո՛շ կերպով խօսեցէ՛ք, հայրի՛կ:

(Աթոռը առաջ կը քերէ ու կը նստի ՏՐ. ի աջ  
կողմը):

ՏՐ. Կ.— Ուրեմն մտիկ ըրէ՛. Այտան՝ իմ սի-  
րելի քրոջս միակ դուստին էր: Քոյրս մտային հի-  
ւանդութենէ մը կը տառապէր և իր հիւանդու-  
թեանը նոպային միջոցին ծնած էր Այտան:  
Կոյր ծնած էր, սակայն ունէ որոշ վարակում մը  
չէր ժառանգած իր մօրը հիւանդութենէն: Քրոջս  
պրիսպցումէն վերջ — խեղճ կին, խիստ թշուա-  
ռութեան մէջ մեռաւ — Այտան որդեգրեցի:  
Ֆիօրէնցա՝ քեզի գրած և այսպէս պատմած էի:  
Աղջնակը այն ստեղծ տառը տարու էր միայն.  
հիմա 18 տարեկան է: Եւ խորհելով թէ՛՝ գեղջ-  
կական կեանքը աւելի աղէկ պիտի ըլլայ իրեն  
համար, Լոնտոնէ հոս փոխադրուեցայ: Ամէն ինչ  
յաջող գնաց, երբ որ մը, դժբաղդաբար, տեղի  
տուի իր փափաքին՝ ըսէ՛ք եղբորս մը մտիկ ը-  
նելու, ինչպէս որ շեշտակի կը կոչէր զայն:  
Աքանջելի կերպով կը նուազէ ու կ'երգէ, ինչ-  
պէս որ գիտես, և մեր քաղաքին մէջ երաժիշտ-  
ներու արտասովոր մէկ նուագահանդէսին առ-  
թիւ՝ զինք տարի, թերեւ կը յիշես, հոն այդ գի-  
շերուան հրդեհը լած ըլլալու ես: Բայց, եթէ  
Պրէնտ ժամբան դանելով ներս չի մտնիր և  
զայն ողջ առողջ գուրա չի հանէր, հրոյ ճարակ  
պիտի ըլլար. ազատեց անոր կեանքը, բայց խել-  
քը փախած էր: Իր հողանիքը պահեցի, Պրէնտ  
ալ պահեց այս գաղտնիքը, բայց քեզի պատմե-  
լու եմ. քանզի այժմ հակամէտ է երբեմն եր-  
բեմն հիւանդութիւնը ցուցնել. և այսպէս, կը

փափաքիմ՝ որ տարի մըն ալ սպասես զինք քեզ  
կնութեան ուղիւէ առաջ:

ՎԻՐ.— Բայց ես առաջարկած էի իրեն:

ՏՐ. Կ.— Ուրեմն պիտի բռնեք թէ ես չեմ  
կրնար հաւանութիւնս տալ 12 ամսուան համար:

ՎԻՐ.— Հայրի՛կ, ո՛ր և է վնաս չունի ինծի:

ՏՐ. Կ.— Անտնկ կը կարծես, ազա՛ս, անտնկ  
կը կարծես, բայց ես քեզմէ աւելի խելացի և  
տարէց եմ. ես բժիշկ մըն եմ և գիտեմ՝ բարին  
ու չարը, նախնեաց արժանիքը: Եկո՛ւր, խօսք  
տուր ինծի:

ՎԻՐ.— (Ոսֆի կ'եղի, աթոռը ետ կը քաշէ):  
Տէ՛ր, ես երբէք կամովին անհնազանդութիւն ը-  
րած չեմ Ձեզի. իբր մարդ՝ կրնամ առարկել  
չքմեղանքի համար. իբր որդի՝ կը խոստանամ:

ՏՐ. Կ.— (Ոսֆի կ'եղի): Բայց ես որդիի մը  
հնազանդութիւնը չէ՛ որ կը պահանջեմ. ես խե-  
լացի անձի մը խելացի խոստումը կը պահանջեմ:

ՎԻՐ.— Թո՛ղ աչքպէս ըլլայ հայրի՛կ, որդիդ  
կը խոստանայ. թող բա՛ւ համարուի:

ՏՐ. Կ.— (Լըջօրեն): Ես իրաւունք չունիմ՝ քեզ-  
մէ ա՛յդ ձեռով խոստում մ'առնելու:

ՎԻՐ.— Իրաւունք չունի՞ք:

ՏՐ. Կ.— Երբէ՛ք:

ՎԻՐ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

ՏՐ. Կ.— Ամբողջ կեանքիս մէջ երբէ՛ք, գի-  
տակցաբար, ճշմարտութեան հետ խաղացած չեմ,  
քեզ վերաբերող խնդիրներու մէջ, քեզի և քեզ  
համար, յանցաւոր եղած եմ երկար բարեկութ  
սուտի մը համար. սակայն ալ չեմ կրնար լուել:

(Կը մտնէ Պրէնտ ձախակն):

Պրէնտ.— Տիկին մը և պարոն մը Ձեզ տես-  
նել կ'ուզեն, աէ՛ր: Ձէի գիտեր՝ թէ գրազած էք



Պր. Վիրի հետ, այսպէս ներս հրաւիրեցի զանոնք:  
ՏՐ. Կ.— Շատ լաւ. անմիջապէս պիտի տեսակցիմ. հոս կանչէ՛ զանոնք: Պարտէ՛ղ եկուր, Վիր, ալ շատ լսելիք չունիմ:

Վիր.— Այո՛, այո՛, (մեկուսի) Այ ուրիշ ի՞նչ լսելիք կրնայ ունենալ: Դատնութեան բաժակս բաւ բաւականի լեցուն չէ՞ տակաւին: Այստ՛ . . . խեղճ Այտա:

Կը մեկնին Sr. Կ. եւ Վիր, երբ Պրեկն կը հրաւիրէ Փրինս Բիքրիանին ու Սալվատորա Տիւֆրար: Սալվատորա աջակողմեան հասարակներու կը յառաջանայ, Փրինսը՝ մօտ կը կենայ, Պրեկն՝ ձախակողմը:

ՊՐԷՆՏ.— Եթէ նստիլ կը փափաքիք, հաճեցէք նստիլ, Պարոնը պիտի չուշանայ:

ՓՐԻՆՍ.— Պիտի սպասենք մինչեւ որ Տօքթորին զբաղմունքը վերջանայ:

ՊՐԷՆՏ.— Շնորհակալութի՛ւն, պարո՛ն:

(Կը մեկնի Պրեկն ձախակողմէն):

ՍԱԼ.— Հոս օգուտ մը պիտի չունենանք, աւնոր վատահեղով: (Բազմոցին վրայ կը նստի):

ՓՐԻՆՍ.— Պիտի ջանանք. գիւղին մէջ կ'ըսեն թէ այս բժիշկը խիստ բարեկեցիկ է, թէեւ այսքան անշուք կ'ապրի. կ'ըսեն նաեւ թէ շատ ազբատասէր է: Մենք սղորմութեան կարօտ ենք ձիւղ այս վայրկեանիս, — բէլ-բէլ — ահա՛ ամբողջ զրպաններս, միջնորդապիւն օգով լեցուն են, խկ զրամի կողմէ բոլորովին պարտապ:

ՍԱԼ.— Երանի թէ այդ հարուստ Անդգիացի ապուշը ձեռք անցնէինք, իր պահապանը չեկած:

ՓՐԻՆՍ.— Ժի՛շդ է. բայց չըրինք. իր պարտամարհաններովը լեցուն չուշատեար մ'ունիմ, եւ երբ իրենց ներկայացայ, պահապանը խնդայ

հրեւիս. երբ սպառնացի՝ զանգաղը հնչեց: Եւ երբ երգում ըրի թէ՛ կառավարութեան կը դիմեմ, ինծի ըսաւ թէ՛ կրնամ նոյնիսկ կրո՞ղին երթալ. այսպէս հոս կը գտնուինք, Լոնտոնէ վաթսուս մղոն հեռու եւ անկուտի: (Աթոռին վրայ կը նստի անկիւնի սեղանին աջակողմը): Տեղական պանդոկը զրամ կը պահանջէ մեզմէ, այսպէս տեղական գեղարան եկանք. եթէ հոս ալ ձախողինք, պէտք է որ գողութիւն ընենք: Շատ գողութիւններու մէջ դանուած եմ, սակայն չեմ ուզեր ոստիկանութեան ձեռքը անցնիլ:

(Պրեկն կը վերամուտէ ձախակողմէն):

ՊՐԷՆՏ.— Առաւօտեան թերթը, տէ՛ր, «Շեյֆօմ Նիւզ» . ամբողջ տեղական լուրերով լեցուն:

ՓՐԻՆՍ.— Շնորհակալութի՛ւն:

ՍԱԼ.— Կը կարծե՞ս որ Տօքթորը պիտի ուշանայ:

ՊՐԷՆՏ.— Շատ չուշտար, Տիկին:

ՍԱԼ.— Կը լսենք թէ խիստ ճարպիկ է:

ՊՐԷՆՏ.— Ժարպիկ է, Տիկին: Ես ալ անանկ կը կարծեմ. բայց շատ բարի է, եւ ան ալ բոլոր ճարպիկ մարդոցմէ աւելի:

ՓՐԻՆՍ.— Փիլիսոփայ մըն էք կ'երեւի:

ՊՐԷՆՏ.— Անա՞նկ է: Լա՛ւ. չէի գիտեր թէ փիլիսոփայ մըն եմ, բայց եթէ անանկ կ'ըլտէք, թող ա՛յնպէս ըլլայ: Կը կարծէի թէ՛ ես սոսկ պարկեշտ խեղճուկ գործակատար մը եւ զօրաւոր, չարքաշ մարդուկ մըն եմ՝ միտակա տփեղու մէջ. եւ կը կարծէի թէ աւելի ապուշ մըն եմ ուրիշ բաներու մէջ. բայց ես մարդուն խերը կ'անիծեմ, եւ եթէ չկարենամ՝ մինչեւ վերջը կը կոտորիմ, մինչեւ որ հոգիս ելլէ:

ՓՐԻՆՍ.— Զինուորութիւն բրա՞ծ ես:

ՊՐԷՆՏ.— Ամբողջ կեանքիս մէջ, փա՛ռք Աս-



տուժոյ, և երանի թէ ապագայ կեանքիս ամբողջն  
ալ զինուորութեամբ անցնէի:

ՓՐԻՆՍ.— Պատերազմի մասնակցած ես:

ՊՐԷՆՏ.— Է՛հ, քիչ մը Ափրիկէի Տըւէլ Լէւ-  
վաշտին մէջ, և անկէ վերջ քիչ մըն ալ Եգիպ-  
տոս գտնուեցայ. բայց, Պարսն, խի՛ստ հաճոյա-  
լից էր, խի՛ստ հաճոյալից: Տաք, այո՛, և ցուրտ,  
այո՛, բայց կռիւներով և բարի ընկերակցութիւն-  
ներով լեցուն էր: Զինուոր եղած էք, Պարսն:

ՓՐԻՆՍ.— Չէ՛, ես Անգլիացի չեմ, Իսաւրացի  
մըն եմ:

ՊՐԷՆՏ.— Ա՛հ, անոնց մէջ ալ բարի մարդուկ-  
ներ պակաս չեն, Ափրիկէի մէջ Աւստրալացի մը  
կը ձանչնամ, ապակ'տա — Սվուիւրի Քլաուս —  
(ՍԱԼ. ոտքի կ'եղէ. կ'երթայ. դուրս կը նայի ան-  
կիւնի պատահանէն) ամէնէն սրամիտ մարդն էր:

ՍԱԼ.— Աստուած իմ:

ՓՐԻՆՍ.— Ի՞նչ է:

ՍԱԼ.— Կողս էր ցաւի: Կը հաճի՞ք գտաւթ մը  
ջուր բերել: (Պրէնտ ի):

ՊՐԷՆՏ.— Անշո՛ւշտ, Տիկին, (մեկնուա) Պրան-  
տի և Ջուր ըսել ուզեց, այդպէս ըսել ուզած ըլ-  
լալու է. բայց միայն Ջուր պիտի տանիմ:

(Կը մեկնի):

ՍԱԼ.— Անթոնիօ, հո՛ս եկուր, շո՛ւտ:

ՓՐԻՆՍ.— Ի՞նչ է: (Բռնը կ'երթայ եւ ՍԱԼ. ի  
եսեւը կենալով ուսերուն վրայէն կը նայի):

ՍԱԼ.— Կը տեսնե՞ս այդ մարդը՝ որ երեսը  
մեզի զարձուցած միւս մարդուն կը խօսի, հո՛ն,  
կը ձանչնա՞ս: Լա՛ւ նայէ:

ՓՐԻՆՍ.— Անո՛ր կը նմանի:

ՍԱԼ.— Անո՛ր կը նմանի: Ա՛ն է, կ'ըսեմ քեզի,  
(նստարանին կը յատարանայ) գիտե՛մ, ամէ՛նքը  
կը ձանչնամ: Կլօյրը էր, միւս անունը իրենց

անիծեալ բնականիքին: Տե՛ս, հոս աչաւմ մը կոյ,  
չուտով պատկերները աչքէ անցո՛ւր: (Էջերը  
շուտ շուտ դարձնելով): Ահա՛, ահա՛, կոյքն փրան  
է: Ինչպէ՞ս կրնամ չի ձանչնալ զայն: Եւ ահա՛  
աղջկան լուսանկարը՝ որ երէկ եկեղեցի՛ն այնչա՛ն  
սքանչելիօրէն կ'երգեր:

(Կը մտնէ Պրէնտ):

ՊՐԷՆՏ.— Հրամայե՛ք, աիկի՛ն, ջուրը (Սե-  
ղանին վրայ կը դնէ): Այդ ալպոմը Օր՛որդ Այտա-  
լին կը պատկանի: Դրեցիներուն նախընտրէն հա-  
մար չէ դուռը:

ՍԱԼ.— (նստած): Կը ցաւիմ, (կը խմէ ջուրը):  
Յուս անցուց Ռո՛վ է Օրիորդ Այտան:

ՊՐԷՆՏ.— Մեր տ'րոջ քեռակցիկը, մեր փոք-  
րիկ ախրահին, կոյր է:

ՓՐԻՆՍ.— (Սալ, և կ'առնէ Աշտուկ): Հեռա-  
բար ալպոմը ոգուս չ'ունի իրեն:

(Բազկաքոռիկն վրայ կը նստի):

ՊՐԷՆՏ.— Ի՛նչ կուզէ թող ըլլայ, սարսն. Ալ-  
պոմը իրենն է և կուզէ գիտնալ թէ, թէպէտ չի  
կրնար տեսնել, անոր՝ միայն իր ախոյժած ան-  
ձերը զպէն, և ես հոս անո՛ր հակելու համար կը  
կենամ, ուստի, աւմիջապէս ձգեցէ՛ք, պարո՛ն և-  
թէ կը հաճէ՛ք:

ՓՐԻՆՍ.— Յօժարութեամբ սիրելիս, միայն  
պիտի հարցնէի թէ ձեկատըր գտնուող պատկերը  
Տր. Կլօյրի՞նն է արդեօք:

(Սեղանին վրայ կը ձգէ):

ՊՐԷՆՏ.— Անտա՛րակոյս, անտա՛րա՛յոյս, բայց  
ահա՛ւտակի Տոքթորը, ալ լուսանկարն լաւ պէտք  
չ'ունիք: (Տը. կը տեսնուի պատահանէն): Անե-  
քեզին մէկն է, Օրիորդ Այտայի բաներուն կը գրպ-



չի: Տաղակացուցիչ են իր իտալական վարուելակերպերը:

Օ՛ր քաղաքավարութիւնն չի կա՛յ Անգղիայէ դուրս:

(Կը մեկնի Պրեկս ձախակողմէն):

(Կը մտնէ Տ. Կ. օվր Ժախէն: Սաղվատորա քանձո՛ր ֆողը երեսին կը ձգէ):

ՏՐ. Կ.— (կուգայ): Ներեցէ՛ք, Տիկի՛ն, Ձեզ ըսպացնելու համար: Ի՞նչ ծառայութիւն կընամքնել Ձեզ:

ՓՐԻՆՍ.— (Ոտի կ'եղէ): Հոս օտարականներ ըլլալով, Ձեր ձեռնտութիւնն ու պատուէրը փնտռել համարձակեցանք:

ՏՐ. Կ.— Ներողութիւն, ես միայն աղքատներու միջև է որ կը գործեմ, զբաղմունքիս բերմամբ: Գործակիցս ու բարեկամս Տր. Օլտֆիլտ, որ գիւղին միւս ծայրը կը բնակի, բոլոր բարեկեցիկները կը խնամէ: Կրնամք անոր յանձնարարել Ձեզ:

ՓՐԻՆՍ.— Վախնամ մենք՝ Ձեր ո՛չ մէկուն համար ալ շահարէր հիւանդներ ենք, ո՛չ ալ, յիշուի, հիւանդներ երբէք, Մենք մեզ կը զանենք օտար միջավայրի մը մէջ և բացարձակապէս անկուտի: Կրնամք և կը հաճի՞ք մեզ օգնել:

ՏՐ. Կ.— Հաճեցէ՛ք մտքերնիդ լուսաբանել:

ՓՐԻՆՍ.— Մենք օտարներ ենք և արկածախնդրական վիճակով մը հասանք հոս: Խարուեցանք, և մեր ունեցածին բոլորը վատնեցինք մինչև որ հոս հասանք: Կը փախաքինք ըստ կարելոյն շուտ մեկնիլ, ուստի Ձեր բարեացակամ նպաստը կը խնդրենք:

ՏՐ. Կ.— Երանի թէ ուրիշ տեղ երթալիք, որովհետև, ճշմարիտը խօսելով, ես շատ բարեացակամ չեմ օտարներու հանդէպ, կարծեմ, պիտի

ներէք ինձ, եթէ չեմ սխալիր, Իտալացիի մը հետ է որ կը խօսիմ:

ՓՐԻՆՍ.— Այո՛:

ՏՐ. Կ.— Կրնամք հարցնել Ձեզ թէ՛ ի՞նչ պաշտօնով եկած էք հոս:

ՓՐԻՆՍ.— Ո՛հ, անկարելի խնդիր մըն է և Ձեզ պիտի չի շահադրուէ:

ՏՐ. Կ.— Շատ վստահ չեմ ատոր: Եթէ չեմ սխալիր, դուք, երէկ՝ բարեկամներէս միոյն, իրմէ՛զ որոմ շորթելու նպատակով՝ այցելող պարոնն էք:

ՓՐԻՆՍ.— Չ'եմ հասկնար թէ ինչ բան կ'ուզէք:

ՏՐ. Կ.— Ապուշ տղու մը միտկ պահապանն է ան, որ խաղամուկի մը ճիրաններուն մէջ ինկաւ և իրեն քանի մը պարտամուրհակներ առաւ: Այդ խաղամուկը իրեն հեռեկեցաւ մինչև հոս և ջանաց պահապանին աչքը վախցնել, որ ինչպէս առաջ ըսի, իմ բարեկամս է, վստահ եմ որ յիշեալ խաղամուկի հետ է որ կը խօսիմ:

ՓՐԻՆՍ.— Հոս եկած եմ ծառայութիւն մը խնդրել պարոնէ մը, եթէ պիտի չի համակերպիք հոգ չէ, բայց զիս կը նախատէք, ես իրե՛կ տեղեկութիւն չ'ունիմ ո՛չ խաղամուկէն, ո՛չ տղէն, ոչ ալ պահապանէն:

ՏՐ. Կ.— Խնդիրը շատ պարզ է: Հոս կ'ապաստե՞ք մինչև որ լուր զրկեմ՝ բարեկամս կանչելու: — Եթէ ինծի բէ՛ թէ՛ կը սխալիս, ո՛չ միայն ներողութիւն պիտի խնդրեմ, ալ քսակս ալ Ձեր տրամադրութեան ներքե պիտի զնեմ:

ՓՐԻՆՍ.— Աւելի գէշ և աւելի գէշ. խօսքիս կը կասկածիք և զիս կը նախատէք, աւելի և աւելի:

ՏՐ. Կ.— Այնքան սրամիտ և յանձնապաստան կը թուիք որ, երբ խնդիրը պարզեմ, միայն կրնամք Ձեզ շնորհաւորել, Ձեր՝ զիս սխալեցնել փոր-



ձեռք յաջողակ ձեռն համար: Այս տեսակցութիւնը վերջացած նկատեցէք:

ՍԱԼ.— (Ոսֆի կ'ելլէ): Չե՛մ կարծեր:

(Տր. լը կը սարսռայ):

ՏՐ. Կ.— Ա՛յդ ձայնը:

ՍԱԼ.— Ո՛հ, Կը յիշէ՞ք:

(Քոյր կը վերցնէ եւ դիմացը կուգայ):

ՏՐ. Կ.— Շա՛տ լաւ կը յիշեմ: Շա՛տ լաւ:

ՍԱԼ.— Ուստի, այժմ՝ պիտի օգնէ՞ք մեզ:

ՏՐ. Կ.— Առաջուրնէ՛ն ալ նուազ:

ՍԱԼ.— Ո՛ւր է որդիս:

ՏՐ. Կ.— Համեստ կեանք մը կ'անցնէ:

ՍԱԼ.— Ո՞ւր:

ՏՐ. Կ.— Խօսք մը բակ չեմ ուզեր անոր մասին, չեմ ուզեր ու եւ է լուր տալ իր կեանքին վերայօք:

ՍԱԼ.— Ձեզի յայտնեցի Տրէգլարնի մէջ, Ձեզմէ բաժնուելէս առաջ, թէ Ձեր աղան չէ՛ր ան:

ՏՐ. Կ.— Ան՝ հարսնիքի ատեն ծնած էր եւ Անգղիական օրէնքը զիս թոյլատրեց անոր տիրանալ, տիրացայ, իմ մականունս կը կրէ եւ երբէ՛ք չանպատուեց զայն, երբէ՛ք պիտի չնախատեմ զինք, Ձեզ թոյլատրելով, որ ուր ըլլալուն տեղեկանաք: Ձինք աղատեցի քու կեանքիդ պղծութիւնէն: Հոս, պիտի չ'ընկերակցի քու պաշտպանիդ:

ՍԱԼ.— Այո՛, եւ ինձմէ խլեցիր միակ մեղմացուցիչ ոյժը որ կրնար փրկել զիս, եւ ըլլալէ այն, ինչ որ հիմա եմ: Գէշ պիտի վարուէի քեզ հետ, բայց բարի պիտի ըլլայի իրեն հանդէպ:

ՏՐ. Կ.— Պատասխանս նոյնն է: Ան քեզ համար կորսուած է յաւիտեանապէս, եթէ կրնամ:

ՍԱԼ.— Ուշադրութիւն: Մէջս դե մը կ'ար-

թնցնել, որ վրէժ պիտի տանէ քեզմէ, կերպով մը: Ահա՛ կը խոստանամ:

ՏՐ. Կ.— Կը խոստանա՛ս:

ՍԱԼ.— Այո՛, կը խոստանամ, ստախօսի մը խոստումը, ստախօս մը՝ որ ճշմարիտը էր խօսի մէ՛կ անգամ, եթէ ինձ ըսես իր ո՛ւր ըլլալը՝ որ կարենայի ծունկերուս վրան սողոսկիլ, մինչեւ որ իրեն հասնէ՛, եւ գինք մ'իայն գիտէի: Պիտի չի խօսիմ իրեն հետ, երբէ՛ք, անգամ մ'իսկ, մինչեւ որ մեռնիմ, միայն գթութիւն կը հայցեմ:

ՏՐ. Կ.— Կամեցած կրնաս ըլլալ խօսածներդ, բայց հոս, քու ամուսինդ, ա՛ն ի՞նչ պիտի ընէ: Կը կարծե՞ս թէ պայճի վախերով պիտի չ'զբաղի, կը կարծե՞ս թէ այդքան խղճամշտ պիտի չ'ըլլայ, չե՞ս կարծեր: Այդ խաղամուրը, որ լակտ մը գըլ-խէ կը հանէ, պարտաւորակներ գրել կ'ստիպէ, եւ յետոյ կը փորձէ արհապանին աչքը վախցնել, վճարելով զանոնք: Այս տեսակ մարդ է Ձեր խիղճը յարգողը, կամ Ձեր աղաչանքին հեղինակութեան ոյժ տուողը:

Լաէ՛, ա՛լ վերջանայ թող այս տեսակցութիւնը: Դու երբէ՛ք պիտի չի տեսնես այն զաւակը որ կը պարծենաս թէ իմն չէ: Երբէ՛ք պիտի չի հանդիպիք իր կենդանութեանը: Ամէնատկար յարաբերութեան մ'իսկ պիտի չի բերէք զինքը: Ձեզի կամ Ձեր մէջի սե սատանին հետ: Ա՛լ լմնցայ:

ՓՐԻՆՍ.— Այո՛, դո՛ւք լմնցաք, բայց մենք, ո՛չ: Մենք պարտքեր կը հասուցանենք, մենք կանանչագգեստ Պոհմեմացիքս, մենք հակառակորդներ կը պահենք վրէժխնդրութեան արիւնատ սեղանին վրայ գնելու: Դուք այսօր՝ տոմսակները կը գրաւէք, եւ դրամը՝ դրամատունէ, սպասէ՛, սպասէ՛:

(ՏՐ. ք եղեկատես կոճակին կը դադի, փէ՛մը սեղանին ձախ կողմէ կ'երթայ):



ՍԱԼ.— Ան կը խօսի ինչպէս որ խօսիլ պիտի ուզէի. եթէ մեր ճամբուն վրայ ուէ բան պատահի, ուէ բան որ գնահատուած է Ձեր կողմէ, որ սիրելի է Ձեզի, սւշադրութիւն:

(Այսան կը տեսնուի պատուհանէն:— ՍԱԼ. կը շոհ եւ ներս կը պշնու:— Բիքրիանի խիստ կ'ազդուի զեղեցկութենէն:—  
Լոռութիւն:

ԱՅՏԱ.— Սինեօ՛ր:

ՏՐ. Կ.— Իսկո՛յն, պատուակա՛նս: (Կը մտնի Պրեկէս ձախէն) Պրէ՛նտ, դուռը բա՛ց եւ դուրս հանէ այս տիկինն ու պարոնը, երթա՛ք բարով:

(Յամբաքար դուրս կ'երդնէ ձախակողմէն:  
Յայտնի ընկու ե ՍԱԼ.ի ձեռքէն քե վրեժխնդրութեան առիթ մը կը տեսնէ):

ԱՅՏԱ.— Ձայներնիդ յողնած է, Սինեօ՛ր, նեղացած ըլլալու էք:

ՏՐ. Կ.— Չէ՛, սիրելիս, ո՛չ այնքան, միայն թէ խորհրդակցած էի մէկու մը հետ զոր չէի կրնար համոզել:

ԱՅՏԱ.— Սինեօ՛ր, չար պայիկ մըն եմ:

ՏՐ. Կ.— Ինչո՞ւ անանկ կ'ըսես:

(Անոր կը մօտենայ):

ԱՅՏԱ.— Ամբողջ երջանիկ գիշերը գաղտնիք մը պահած եմ տիրոջմէս:

ՏՐ. Կ.— Քեզի կը ներէ, քեզի պիտի ներէ անկէ չա՛տ աւելին, փոքրիկս: Բայց գաղտնիքդ դու գաղտնի՞ք պիտի մնայ:

ԱՅՏԱ.— Այո՛, պահիկ մըն ալ Վիրը նկարագրէ ինձի, քեզի կը նմանի՞:

ՏՐ. Կ.— Չէ՛, ան աւելի սեւ է:

ԱՅՏԱ.— Ինչո՞ւ քեզի չի նմանեցաւ. քիչ մը Ուրեմն, Վիր մօ՞րը կը նմանի:

(Կը նստի օրոցին վրայ):

ՏՐ. Կ.— Այո՛, գէժքով, շատ կը նմանի իրեն:

ԱՅՏԱ.— Եւ բնո՞ւթեամբ:

ՏՐ. Կ.— Աւելի՛ շատ, այո՛:

ԱՅՏԱ.— Վիր գեղեցիկ է, մայրն ալ գեղեցիկ էր:

ՏՐ. Կ.— Շատ գեղեցիկ, սիրելիս:

ԱՅՏԱ.— Դիտէ՛ք շատ արագ կը ճանչնամ ձայները, անոնց մէջ ելեւէջներ կը գտնեմ որոնք ուրիշներու ուշադրութենէն կը խուսափին: Յաճախ մտիկ կ'ընեմ Վիրի ձայնը եւ կը ցաւիմ, քիչ մը նմանութիւն գտնելով քուկինիդ, սակայն չեմ կրնար լսել զայն, երանի թէ իր մեռած մօրը խօսիլը լսէի անգամ մը:

ՏՐ. Կ.— (Մեկուսի): Աստուած չ'ընէ որ լսէիք (Այսայի ձախ կողմը կը նստի): Սիրելի՛ս, քեզմէ բան մը ընել պիտի պահանջէի, սիրոյս համար: Եթէ երբէք Վիր քեզ՝ իր կինը ըլլալ խնդրեր, «տարի մը սպասելու եմ այդ՝ կամ՝ ո՛չ պատասխանելէս առաջ» կ'ըսե՛ս:

ԱՅՏԱ.— Ո՛հ բայց ես «այո՛» ըսի, սխալ ըրած եմ: Այո էր գաղտնիքս, իմ միակ թանկագին գաղտնիքս, եւ կռահեցիք, իսկ ես ալ սխալ ըրած եմ:

ՏՐ. Կ.— Չէ՛ չէ՛, երբէք սխալ չէ, բայց հաստատ պիտի մնա՞ք եւ հիմա իմ ուզածս պիտի ընէ՞ք: «Քեզ կը սիրեմ, Վիր, սակայն տարուան մը համար չեմ կրնար այդ ըսե՛ք», պիտի ըսե՛ս:

ԱՅՏԱ.— (Տիրամ): Այդպէ՛ս պիտի ըսեմ: Բայց ինչո՞ւ:

ՏՐ. Կ.— Որովհետեւ, սրտիս հատորը Վիր ամուսնանալէ առաջ պէտք է որ, ասորի՝ մըն ալ



աշխատի արատաճման, քանզի իր արուեստը, զոր երբէ՛ք պիտի չի տեսնես, այդպէս կը պահանջէ, որպէսզի:

**ԱՅՏԱ.** — Որպէսզի, ուրիշ բան մ'ըն ալ կոչ որ չես համարձակիր ինծի լսել: Սիրելի Սինեո՛ր, ծայրոջ լս'ւ կը ճանչնամ, դուք գէշ խաբող մ'ըն էք: Ձեր խօսքերուն արտառոց կեղծումը կը հասկնամ, Ձեր խօսածէն աւելի պահել ուղածին մէջ աւելի:

**ՏՐ. Կ.** — Անուշիկս, կարծիքներու կպտով մը մի՛ մի յառաջ նետուիր, թէ...

**ԱՅՏԱ.** — Ո՛հ ինձ: Կը յուսացի թէ ճշմարիտ չ'էր, բայց հիմա կը հասկնամ թէ երազ չ'էր:

**ՏՐ. Կ.** — Ի՞նչ բան երազ չ'էր:

**ԱՅՏԱ.** — Երբ հիւանդ էի, Սինեո՛ր, ծա՛նը հիւանդ, կը յիշէք, գիշեր մը Պրէնա ինծի հետ կը նստի զիս խոր քուռի մէջ կարծեց և, քանի որ հիմա կը հասկնամ թէ ճիշդ էր ինչ որ լսեցի, բարձիս վրան կը թնեցաւ, զիս համբուրեց և ձակախ վրան արցունքի խոշոր կաթիլ մը գլորեց, և յետոյ, գիտեմ, պատուհան գնաց ու բարձրածայն լացաւ, «Անուշիկ տիրուհիս, Այտա՛, ո՛վ Աստուած, երանի թէ կեանքս կարենայի տալ անոր ապաքինմանը համար, Աստուած իմ, Աստուած իմ», Սինեո՛ր, ցնորած էի, կը վախնաս թէ այս ցաւը վերադառնայ: Քու բուն նպատակդ այժս է, վերը սպասցնել փափաքելուդ մէջ:

**ՏՐ. Կ.** — (Մեկոսի): Ի՞նչ բան, ի՞նչ լսեմ:

**ԱՅՏԱ.** — Իրատունը ունիք, պիտի սպասցնեմ զինք, Այտա վիշտ պիտի չ'առնէ իր սիրահարին, Կոյր, կեանքիս մէջ կարճուկ, քաղցրիկ գիշերուան մը համար ճանչցայ ՍԻՐՈՅ երեսը: Յախտեանս յախտենից, արնշափ ատեն որ կեանք ունենամ,

փստահ պիտի լլլամ ի՞նչ Մէլը՝ կը փարտաւէ փսր: Տե՛ս, անվահե՛ր եմ:

**ՏՐ. Կ.** — Սիրելիս, ի՞նչ կրնամ բնել կամ քնել (Ոսֆի կ'եղի): Լու՛, Վի՛ր կուգայ, պիտի բաժնուի՛մ քեզմէ (Մեկոսի): Այս բանը՝ կը վհատեցնէ զիս:

(Կը մեկնի Տր. Կոյր)

**ԱՅՏԱ.** — (Ոսֆի կ'եղի): Ահաւասիկ կուգայ Վիր (Քիչ մը անդին կ'երբ այ): Զօրաւոր, քնքուշ աղջնակ մ'ըլլամ հիմա: Ներողութեան հանդերձին քղանցքին ամենայեւին ծայրը դաշխ: Եւ իր սիրոյն համար ներողամիտ ըլլամ իրեն: Թէպէտ ներողամտութեան մեծութիւնը կ'ընկճէ սիրտս: Մեր յուսահատութեան արատաւնելիք՝ ամենաբուռն աղաչանքները ծնրադրած չէ՛ որ կ'ըլան: Միւտո՛ն, խարխափող կոյրերու կոյր բանաստեղծը, ամբողջ կեանքդ աղօթք մըն էր, և միշտ խոնարհ սրտով մը միայն էր որ ծնրադրեցիր:

(Կը մտնէ Վիր):

**ԱՅՏԱ.** — Դո՛ւ ես Վիր:

**Վիր.** — (Յաճուկ): Այո՛, Այտա՛: Քեզ վարդեր զրկեցի այսօր, ստացա՞ր:

**ԱՅՏԱ.** — Ո՛չ, տակաւին. կարելի է Պրէնա մոռցաւ. չատ զբաղած էր: Բայց կը հաճի՞ք ինծի տալ: Շատ կ'ախորժիմ անոնցմէ: (Մոտենալով):

**Վիր.** — Ահաւասիկ, հո՛ս են. դաշնակին վրայ կը գնահատէ՞ք: (Ոսֆի կ'եղի):

**ԱՅՏԱ.** — Ո՛հ, այո՛, երբէ՛ք պիտի չի կորսնցնեմ և պիտի չի մոռնամ մինչև որ մեռնիմ:

**Վիր.** — Քեզի բրած բոլոր նուէրներուս եթէ սրպէս ինամք տանիս՝ ինչքա՛ն չատ տկնկալելիք բաներ պիտի ունենաս:

**ԱՅՏԱ.** — Ա՛հ, բայց ո՛չ մէկը պիտի նմանի անոնց. Վիր, սիրելիս:



ՎԻՐ.— Ո՛հ, ե՛ս ալ այդպէս կը յուսամ. բայց ասոնք պիտի թառամին:

ԱՅՏԱ.— Չե՛մ կարծեր, իմ համարումովս: Վի՛ր, անցեալ գիշիր սուաջարկած էիր որ կինդ ըլլամ, ես ալ «այո՛» բռած էի:

ՎԻՐ.— Ճշմարիտ է, այդպէ՛ս ըսիք:

ԱՅՏԱ.— Գիտես, խելացիութիւն չըրի «այո՛» ըսելուս:

ՎԻՐ.— Խելացիութիւն չըրի՞ր:

ԱՅՏԱ.— Այո՛, պէտք էր որ միջոց խնդրէի խորհելու. յիշելու էի թէ կին մը պէտք է որ օգնական մ'ըլլայ. թէ ես կոյր եմ, թէ դուն պարս ես և պէ՛տք էր որ փառասէր ըլլայիր, թէ այսպէս չէիր կրնար համբուի ետեւ ըլլալ և միեւնոյն ատեն զիս հոգալ: Վի՛ր, խօսքերդ ե՛տ առ և առաջուան պէս քոյր — եղբայր ըլլանք:

ՎԻՐ.— Այտա՛, ետ չե՛մ տաներ: Ես քեզի սէրս ու կեանքս նուիրեցի, քու հաշմանդամութիւնդ քեզ աւելի սիրելի կը դարձնէ, քու հաւատացածէդ ու հասկցածէդ ա՛լ աւելի:

ԱՅՏԱ.— (Մեկիռսի): Քաջասիրտ ըլլամ: Վի՛ր, անկարելի է կ'ըսեմ քեզի. երբէ՛ք պիտի չ'ամուսնանամ: Ես Սինեօրին քովը պիտի մնամ:

ՎԻՐ.— Բայց ես իրեն ըսի, և տարի մը սպասելս կը բաղձար:

ԱՅՏԱ.— Այսօր ի՛նչ որ կ'ըսեմ տարիէ մը նոյնը պիտի պատասխանեմ:

ՎԻՐ.— Բայց ինչո՞ւ: (Մեկիռսի): Կրնա՞յ գիտնուիլ ինչ որ բառ Սինեօրը ինծի:

ԱՅՏԱ.— Երբ անցեալ գիշեր «այո՛» ըսի քեզի, խորապէս խորհած չէի: Ես մի՛այն, ի՛նչ անձնասէր էի, ինքզինքս խորհեցայ և քու վրայովդ ո՛հ աստ ըսուածս:

ՎԻՐ.— Սինեօրը՛ այսօր առաջուց չի գիտցած մէկ բանդ բա՞ւ քեզի:

ԱՅՏԱ.— Չէ՛: Ես խօսեցայ ինչ որ ինք չէր գիտեր առաջ:

ՎԻՐ.— Բայց ասանկ, թեթեօրէն, անտարբերութեամբ, կ'ուզե՞ս մեր երկուքին ալ կեանքը խորշակահարել: Դուն՝ չես կրնար սիրել զիս, Այտա՛: (Քիչ մը յառաջ կ'երթայ):

ԱՅՏԱ.— Քեզ չի սիրե՛լ: Ո՛հ, Վի՛ր:

ՎԻՐ.— Ներողութիւն:

ԱՅՏԱ.— Ոչի՛նչ կայ ներելու: (Կը մօտենան): Վայրկեանական կասկած մըն էր իմ վրայովս, ահա՛՛ բոլորը Վի՛ր, ես ամբողջ թերութիւններս կը ճանչնամ. ձգէ՛, մի՛ յիշեր: Ոմանց վրայ՝ անտարակոյս, բարի նպատակի մը համար զրուած է հաշմանդամութիւնը: Արդ, քաջասիրտ ըլլալու ենք — դուն և ես — բայց ո՛հ, երբէք մի՛ կասկածիր քեզ սիրելուս: Ահաւասիկ, տե՛ս, կը համբուրեմ, մինչև որ թառամին և անճանաչելի ըլլան: (Ինքիմե եղած, յոգուած): Արդ. ես կ'երթամ. մնաք բարեա՛ւ: Դուն՝ Լոնտոն կ'երթաս վաղը, անկից ալ Հռովմ կամ Վենետիկ. ապէ՛ս: Երբ որ մը, սէրս հասկնաս, այն ատեն պիտի կուսնես թէ որքան ջանացած եմ ազնիւ ըլլալ:

(Դուրս կ'երթայ գրեթէ շաղով):

ՎԻՐ.— Ազնի՛ւ, ստուգիւ: Սակայն, ի՛նչ ալ ըլլայ, հիմա կամ վերջը վերստին պիտի սիրաւորեմ քեզ, սիրակա՛նա: Ա՛լ դադրեցո՛ւր, ա՛լ յոյսդ կտրէ անմիջապէս: Այսօր հայրս սրդողեցաւ ինձմէ, հիմա ալ անուշիկ Այտաս գնաց անհանդուրժելի՛ է:

(Կը մտնէ Պրեմիս ձախակողմէն):

ՊՐԵՄԻՍ.— Պո, Վի՛ր, Տօթթոթ՝ մուսոս վուհ:



բըր զնաց. Քրոս պողոտային վրան. զիս զրկեց  
հե ի հե: Շատ չ'ուշանար: Եւ, ահա՛. Իտալացի  
պարոնին տիկինը ետ կուգայ, կ'ըսէ թէ պիտի  
սպասէ մինչեւ որ Տոքթորը վերագառնայ:

ՎԻՐ.— Ո՞ր տիկինը, ո՞ր Իտալացին:

ՊՐԷՆՏ.— Օ՛, չեմ գիտեր ո՛վ են:

ՎԻՐ.— Լա՛ւ. հո՛ս հրաճուր. ձեռքէս եկածը  
կ'ընեմ զինք հիւրասիրելու:

ՊՐԷՆՏ.— Ահա՛ կուգայ:

(Կր մտնէ Սարկոսորա ձախէն,  
կը մեկնի Պրէնտ):

ՎԻՐ.— Կը ցաւի՞մ որ Տր. Կլովըր դուրսն է:  
Կը հաճի՞ք աթոռին վրայ նստիլ:

ՍԱԼ.— Շնորհակա՛լ եմ:

ՎԻՐ.— Այցելութեան ելած էք այս առանձ-  
նական վայրը:

ՍԱԼ.— Միայն կարճ ժամանակի մը համար,  
իսկ դո՞ւք:

ՎԻՐ.— Ե՛ս ալ այցելութեան եկած եմ:

ՍԱԼ.— Ա՛յս տունը:

ՎԻՐ.— Ձէ՛: Ես արուեստագէտ մըն եմ և  
Տոքթորը թէպէտ շատ աղնիւ է ինձ հանգէպ,  
գրեթէ կարեւորութիւն չընծայեր արուեստագի-  
տական ժամանցներու: Վախճամ. ճաշ շարժուն  
կերակուրներ են: Ձե՛մ կրնար վերջալոյսը զոհել  
ընթրիքի մը. ուստի անմիջապէս զանց կ'առնեմ  
ընթրիքը:

ՍԱԼ.— Եկեղեցին այնքան հրաշալիօրէն եր-  
գօղը Տոքթորի բեռաղջիկն է:

ՎԻՐ.— Ո՛հ. այո՛. Այտա՛ իր գեղաղջիկը,  
բաւական մեծ գեր կը կատարէ եկեղեցւոյ եր-  
գեհոնին վրայ. և գրեթէ նուազն ու երգեցողու-  
թեանը անգ զհե:

ՍԱԼ.— Եթէ այգիպիտի ձայն մ'ունենայի, ե՛ս  
ալ պիտի գիտնայի. մե՛ղք եթէ իր ձայնը ան-  
ձանօթ մնայ աշխարհի:

ՎԻՐ.— Ձեզի համամիտ եմ մասամբ, բայց,  
կր տեսնէք իր կուրուիթիւնը ցաւառիթ խոչնդոտ  
մը կ'ըլլայ իր ազագային, դուստներդական կամ  
նոյնիսկ նուագահանդէսի բեմին վրայ:

ՍԱԼ.— Ամէն թերութիւնը պիտի հակակշռէ  
իր ձայնը: Տոքթորը զաւակներ ունի՞:

ՎԻՐ.— (ճիգով): Ո՛չ:

ՍԱԼ.— Գիւղին մէջ լսեցի թէ որդի մ'ունի:

ՎԻՐ.— (Չուարթօհն): Բա՛ն մը չի կայ որ  
գեղջկական բարբաջանքը չ'ստեղծէ:

ՍԱԼ.— Ուստի որդի չունի՞:

ՎԻՐ.— Ո՛չ:

ՍԱԼ.— Ազգականութիւն ունի՞ք հետը:

ՎԻՐ.— Շա՛տ հեռուէն:

ՍԱԼ.— Սնդղիւմ մէջ կը գործէք:

ՎԻՐ.— Որտա քիչ: Այս շարաթ վեներիկ պի-  
տի մեկնիմ. կ'ուզեմ լուսնկան ուսումնասիրել  
խաղաղ ջրի վրայ: Հո՛ն պիտի երթամ:

ՍԱԼ.— Իրաւ պիտի երթա՞ք:

(Կր մտնէ Պրէնտ ձախէն):

ՊՐԷՆՏ.— Կրնամ խօսիլ, Պր. Վի՛ր. իսկոյն:

ՎԻՐ.— Անտարակոյս: (Հիւրիկն): Ներողու-  
թիւն, վայրկեանէ մը կուգամ:

(Դուրս կ'երթայ ձախէն, Պրէնտ ալ ետեւէն):

ՍԱԼ.— Լա՛ւ է գործերնիս, յուսամ ձախու-  
ղութիւն մը պիտի չելլէ:

(Քիբրիակի պատահանէն կը մտնէ,  
շուռով կուգայ):

ՓՐԻՆՍ.— Առանձի՞ն էք:

ՍԱԼ.— Ո՛չ տակաւին, շատ կանուխ եկաք.



թէ և լուրը բացէ ի բաց հաշորդուած էր: Պատ-  
րա՞ստ է ամէն ինչ:

ՓՐԻՆՍ.— Այո՛, ձիշդ հի՛մա կտրեցի հեռա-  
գրական թելը. կառքը հաւելի փողոցին մէջ է:  
Այդ ամէն ինչ քեզմէ կախում ունի. եթէ սպա-  
սաւորէն կրնաս ճողոպրիլ և զրամը գտնել, գոր-  
ծերնիս լա՛ւ է:

ՍԱԼ.— Գնա՛, չո՛ւտ. և զարծեալ ստորիկնա-  
լին մէջ պահուրտէ՛, երբ ուղղակի անոնց մեկ-  
նիլը տեսնես՝ ներս եկուր: Միւս ձիերը արձակ-  
ուած են:

ՓՐԻՆՍ.— Այո՛, երկուքն ալ արտ տարի:

ՍԱԼ.— Լա՛ւ. արդ գնա՛: (Կը մեկնի Քիթրիա-  
նի ձախեկն): Վրէժխնդրութեանս կը մեծնայ: Տու-  
ներնիդ լա՛ւ մը պիտի քանդեմ. եթէ արուես-  
տագէտն ու սպասաւորն ալ մեկնին մէյմը. բայց  
եթէ մին մնայ՝ ալն ատեն բաներնիս բուսած է:

(Կը մտնի Պրեկն ձախեկն):

ՊՐԷՆՏ.— Պր. Վիր՝ զիս Ձեզի՛ զրկեց, յայտնե-  
լու թէ Տոքթորը զինք կ'ուզէ, և ստիպուած է  
քովը երթալ:

ՍԱԼ.— Կարծեմ, Տոքթորը շատ չ'անցած կը  
վերագառնայ:

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ. բայց Տիկի՛ն չեմ կարծեր որ  
զայն սպասել պիտի յօժարիք այսօր, քանզի,  
ճշմարիտը խօսելով, գէշ լուրեր ստացանք: Կ'ե-  
րեի թէ Տոքթորը իր ձիէն ինկած է, թէպէտ չեմ  
կրնար հասկնալ թէ ինչպէս պատահեցաւ, որով-  
հետեւ ան լուս ձի հեծնող մըն է և ձին ալ զինք  
կը ճանչնայ շան պէս: Պր. Վիր հեախոտն ձամ-  
բայ ելաւ զինք գտնելու համար, քանզի երանե-  
լի ձիերուս ամբողջն ալ արձակուած են, և վայ-  
րի անտառներու կը նմանին մարգագետնին վը-  
րայ: Գործերը կը ձախողին այսօր, անտարակոյս:

(Չանգակը կը հնչէ, Պրեկն դուրս կը սուրայ  
ձախեկն):

Կարծեմ նոր լուրեր կան:

ՍԱԼ.— Կերպով մի ա՛ն ալ երթալու է:

(Այսան կ'երևի պատահանեկն, կ'ուզայ):

— (Մեկուսի): Ո՛հ. տհաւասիկ որսերնիս: Մի՛  
վախնար սիրելիս: Տր. Կլօքըրը տեսնել կ'սպասեմ:  
ԱՅՏԱ.— (Մեկուսի): Ի՛ր ձայնն է, կամ թէ  
իր ձայնին խիստ նմանող: Ի՛նչ զարմանալի: Վախ-  
ցած չեմ, չնորհակալ եմ: Կարծեմ Տոքթորը շատ  
չ'անցած հոս կ'ըլլայ:

ՍԱԼ.— Յուսամ պիտի կրնայ ըլլալ:

ԱՅՏԱ.— Ինչո՞ւ այդպէս կը խօսիք: Յա՛ւ մը  
ունիք:

ՍԱԼ.— Քիչ մը: Այո՛:

ԱՅՏԱ.— Խեղճ տիկին:

Պրեկն ձայնը կը լսուի դրսէն որ կ'ըսէ.

— «Լա՛ւ, չեմ գիտեր ի՛նչ ընելու է, և սա  
ճշմարտութիւն է: Ձեմ կրնար միշտակ ձգել Օր.  
Այտան»:

(Կը մտնեն Փրիկն Քիթրիանի և Պրեկն):

ՊՐԷՆՏ.— Օրհնեալ Աստուած, Օր. Այտան  
հո՞ս է եղեր, ուրեմն լսած ըլլալու է, յուս-  
սամ թէ:

ԱՅՏԱ.— Պրէ՛նտ, ի՛նչ կայ, ի՛նչ է:

ՊՐԷՆՏ.— Ոչ ի՛նչ, օրիորդի՛կ, ոչ ի՛նչ. միայն  
թէ ձիերը արձակուած են, Տոքթորն ալ բան մը  
ուզած էր:

ԱՅՏԱ.— Ուրեմն հեախոտն գնա՛, Պրէ՛նտ: Ես  
հանգիտտ պիտի նստիմ մինչև որ վերագառնա:

ՓՐԻՆՍ.— (Մօտենալով): Կրնա՞նք ու է ծա-  
ռայութիւն մ'ընել:

ՊՐԷՆՏ.— (Անցնելով կ'ուզայ): Ո՛չ, ո՛չ, չեմ



կրնար ամեն մի՛նակ ձգել զինք:

ՍԱԼ.— Սպասուհիներ չի կա՞ն սակաւն:

ՊՐԷՆՏ.— Հա՛տ մի՛սկ չի կայ. Տոբթորը կը զգուի անոնցմէ, ե՛ս ալ կը զգուիմ՝ աղ- խնդրէն: Ամէն ատուտ մէկը կուգայ կտոր մը մաքրելու, բայց հիմա հոս չէ, գնաց և չեմ կրնար հասնիլ, շատ հեռացած ըլլալու է:

ՍԱԼ.— Ո՛հ, բայց մի՛ վարանիք մեզ՝ Ձեզ ծառայեցնելու: Հոս կ'սպասենք Օրիորդին հետ մինչև որ վերադառնաք:

ՓՐԻՆՍ.— Կ'աղաչեմ բան մ'ընենք Ձեզի հա՛մար, գրեթէ ուէ գործ չունինք:

ԱՅՏԱ.— Նոյնիսկ եթէ աչս արկինն ու պա՛րտը չի կարենան մնալ, ես ապահով եմ, Պը՛րլնա: Գնա՛, չո՛ւտ եղիր:

ՊՐԷՆՏ.— Շա՛տ լաւ, Օրիորդ Այտա, պիտի երթամ: (Քիբրիանիի ուղղելով խօսքը, ետք փո՛վեմ կ'անցնի): Երգութեցի՛ր ինծի թէ պիտի չի խօսիս իրեն հետ:

ՓՐԻՆՍ.— Բա՛ն մի՛սկ, Պարոնի մը պատուոյն վրայ կ'երգնում:

ՊՐԷՆՏ.— Ուշադրութիւն պիտի ընե՞ք իրեն:

ՓՐԻՆՍ.— Պիտի ընենք, պիտի ընենք:

ՊՐԷՆՏ.— Միտքդ պահէ որ՝ կոչն մարդու կ'մըն եմ, երբէ՛ք չեմ մոռնար բարեկամութիւն մը և երբէ՛ք չեմ ներեր յանցանք մը. բայց, ուրեմն, հետեւարար պիտի փտահիմ Ձեզի: Ձե՛ք կրնար անխնայ գտնուիլ իրեն հանդէպ: Կ'երթամ, Օրի- ո՛րդ Այտա:

ԱՅՏԱ.— Լա՛ւ, սիրելի Պրէնտ: Մի՛ ուշանար:

ՊՐԷՆՏ.— Ձեմ ուշանա՛ր, չեմ ուշանար: (Մե՛կուսի): Արդեօք ո՞վ խաղաց այս խաղը ինծի, ձիերը արձակելով:

(Կը մեկնի Պրէնտ: ձախեմ):

ՓՐԻՆՍ.— Տեսեմ եթէ ծառայութիւն մը կրնամ ընել սա բարի զաւակին, վայրկեանէ մը կը վերադառնամ: (Պրէնտի ետեւէ կ'երթայ):

ԱՅՏԱ.— Ի՛նչ ուզած կրնայ ըլլալ մօրեղբայր:

ՍԱԼ.— Վախնամ, անտիկնալէ աւելի բան մըն է:

(Ձախակողմ կ'անցնի):

ԱՅՏԱ.— Կը վախնա՞ք:

ՍԱԼ.— Լա՛ւ, ո՛չ, կուգեմ, ըսել:

ԱՅՏԱ.— Կ'աղաչեմ զրուցէ՛ք ինչ որ ըսել կու- ղէք: Ներեցէ՛ք եթէ հարցումներս արեղցրեղ և կոշտ թուին, բայց հետաքրքիր եմ քիչ մը:

ՍԱԼ.— Վստահ եմ որ եկող լրարեւը շատ վա- զած և մեծ աճապարանքի մէջը կը թուէր, և արուեստագէտ պարտնը որ հոս կը գտնուէր, մեզ հիւրասիրելու համար, անմիջապէս հիւսցաւ և հիմակ ալ ձեր սպասաւորը կ'երթայ:

ԱՅՏԱ.— Ի՛նչ կրնայ նշանակել այս բանը:

ՍԱԼ.— Ամուսինս ընդհուպ կուգայ, կարելի է ան աւելի անգեկութիւն կրնայ ստլ մեզ: Բարե- բողոքարար դիպուածով այցելութեան Լիւսն էինք: Մենք ալ հոս կուգով եկած էինք և ետեւի գը- բան առջեւ է մեր կառքը: Ո՛հ, ո՛հ, ինչո՛ւ չի մտարեցի: Ձեր ծառան կրնար գործածել զայն:

(Կը մեկնի Փրինս Քիբրիանի. Կաւագուկ կը խօսի փոփեմ անցնելուն: «Ամէն բան ձեզն է, 30 ոսկի, ոսկեղրամ, սեղանին վրայ, միւս սենեակը»):

ՍԱԼ.— Անթոնիօ, լսեցի՞ր ճիշդ հիմա Տոբթո- ընէ եկած լուրը:

ՓՐԻՆՍ.— Լա՛ւ ե՛ս էի վերջէն լուրը բերողը:

ԱՅՏԱ.— Ի՛նչ էր:

ՓՐԻՆՍ.— Դրան առջև տղայ մը ինձմէ խըն- դրեց որ անմիջապէս Պր. Պրէնտի ըսեմ թէ խեղճ պարոնի փասը կարծուածէն աւելի ծանր էր և թէ խեղճ Պրէք Հալլօս երթալու է:



ԱՅՏԱ.— Ըսի՞ն թէ ո՞վ էր այդ պարոնը:

ՓՐԻՆԱ.— Խորհեցայ թէ Պր. Պրէնտ գիտնալու է:

ԱՅՏԱ.— Ո՛հ, ինչպէ՞ս վիրաւորուած է արդեօք:

ՓՐԻՆԱ.— Լա՛ւ, կարծեմ՝ բաւ թէ ձեռն ինչ կած է:

ԱՅՏԱ.— Տօքթօրը ըլլալու է: Տիկի՛ն, կը հաճի՞ք ծառայութիւն մ'ընել ինծի: (Անսխալօրէն արքային կ'երթայ որուն վրայ դրուած է իր վերահանը):

ԱՆՆՈՒՆ.— Անշո՛ւշտ:

ԱՅՏԱ.— Քիչ մ'առաջ կ'ըսէիք թէ զրան առջեւ է Ձեր կառքը, կը հաճի՞ք զիս Պլէք Հալլօու տանիլ: Ո՛հ, խնդրեմ, «ո՛չ» մի՛ ըսէք, խնդրեմ մի՛ ըսէք:

ՓՐԻՆԱ.— Ժամբան գրեթէ չենք գիտեր:

ԱՅՏԱ.— Կրնանք հարցնել, և ես բաւական տեղ մը կրնամ առաջնորդել Ձեզ (Փրինսի ֆոյ կ'երթայ): Այդ աճապարենք: Ամենակարճ ժամբան պատուհանէն պիտի ըլլայ: Ո՛հ վարդե՛րա: (մեկուսի) Տո՛ւն, տո՛ւն, ի՛նչ պիտի ըլլայ վիճակդ առանց Տօքթօրին: Երթա՛նք, ինչքա՛ն ազնիւ էք:

(ԱՆՆ. աճապարանօք կը գրե. գրած քուրքը կը ձգէ սեղանին վրայ, շուրջը կը նայի կը մեկնի, եւ երկայն, լածուկ կը խնայ: Կը մեկնի, աջէն, Այտայի եւ Փրինսի ետեւէն: Ասանց մեկնելէն յետոյ պարտեզի դռան զարնուիլը կը լսուի եւ մի քանի վայրկեան յետոյ ճարձասիւն մը, իբր քե մեկը դուռը կոտրելով ներս կը մտնէ, այդ միջոցին պատահական կը մտնէ Տր. Կոլլըր):

ՏՐ. Կ.— Այտա՛, Այտա՛ (Կը կանչէ): Ի՛նչ կրրնայ նշանակել այս, բոտ կարելոյն սրբնթաց եկայ ձեռով, չորս մղոն տեղ, և ետ գալու տուն:

ձին կը կաղայ, կը հասկնամ թէ թակարդի մը մէջ ինկած եմ, վաւրտօ վաւրրը ուզած է՛ր զիս, պարտեզին դուռն ալ կը պուտած, ի՞նչ կը նշանակէ այս: Այտա՛, ո՛ւր է արդեօք: (Տան մեջ կը մտնէ անձկութեամբ, յուզում, շարժումներուն մեջ: Երբ կը մեկնի՝ Պրինսի ամուսնականը կը լսուի որ պարտեզի կողմէն կուգայ: Երբ սենեակը կը մտնէ խիստ ֆրճած ու նեղացած կը թուի):

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ, անիծեա՛լ ըլլամ եթէ կուտ մ'իսկ կրցի հասկնալ: Պլէք Հալլօու վագեցի հեւարով, երբ կաղ ձիու մը գալը լսեցի, շուրջս մարգագետնին նայելով Տօքթօրին կազալով տուն դառնալը տեսայ. ձախող գործ մը կայ, չի կրցի հասկնալ պո՛ւտ մ'իսկ:

(Վերսին կը մտնէ Տր. Կոլլըր):

ՏՐ. Կ.— Պրէ՛նտ, ո՛ւր էիր:

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ, պարո՛ն, Պլէք Հալլօու զըրկուած էի Ձեզի համար: Ըսին թէ արկածի մը հանդիպեր էք:

ՏՐ. Կ.— Բայց մա՛րդ, գիտես որ միւս կողմէն գացած էի:

ՊՐԷՆՏ.— Տէ՛ր խմ, երբէ՛ք չի խորհեցայ և երբ կը վագէի դէպի հոն, տեսայ որ գլխաւոր ծամբէն կուգայիք, այսպէս ետ դարձայ:

ՏՐ. Կ.— Բայց սենեկիս մէջ մէկը թուղթերս խառնեմ է. ո՛ւր է Օրիորդ Այտան:

ՊՐԷՆՏ.— Ձե՛մ գիտեմ, տէ՛ր խմ: Զինք հոս ձգեցի տիկինի մը և պարոնի մը հետ միասեղ:

ՏՐ. Կ.— Ի՞նչ:

ՊՐԷՆՏ.— Տիկին մը և պարոն մը, որոնք ըսին թէ պիտի սպասեն մինչև որ վերադառնամ. առտուն հոս գտնուողները:



ՏՐ. Կ.— Մե՛ծդ Աստուած, հիմա կը հասկնա՛մ  
բողոքը: (Կը մտնէ Վիւր ձախէն):

Վիւր.— Որե՛ն ո՛ր, ի՞նչ է այդ, վերաւորուեցա՞ք:

ՏՐ. Կ.— Ո՛չ, ո՛չ: Ի՞նչ է այս թուղթը: Ա՛հ  
սրիկանե՛ր, սրիկանե՛ր:

(Թուղթը ձեռքէն կ'իյնայ արողին վրայ):

Վիւր.— (Կը յափշտակե և կը կարդայ): — «Մեր  
վրէժխնդրութիւնը կ'սկսի: Ձեր սրբելի կոյրը  
տարած ենք: Վտանգէ ապահով պիտի ըլլայ, սա-  
կայն անգամ մըն ալ պիտի չի տեսնէք զինք.—  
Սու՛րբ:»): Ի՞նչ կը նշանակէ այս:

ՏՐ. Կ.— Այդ կը նշանակէ թէ Այտան գող-  
ցուած է մեզմէ, Աստուծոյ ստեղծած ամենավատ  
մարդուն և կնկան ձեռքով: Անգա՛մ աշխարհ,  
անգամ մը խելացնոր եղած էր, կրկին պիտի  
խենդեցնեն զինք:

Վիւր.— Բայց ո՞վ գողցած է:

ՊՐԷՆՏ.— Ա՛հ, ա՛յ, այդ Խաւարցին և սև կինը,  
տէ՛ր: (Տր. ոտքի կ'եղէ): Իրեն ըսի թէ երբէ՛ք  
պիտի չի ներեմ յանցանք մը: Արի՛ւնը պիտի  
քամեմ: Հեռագրատուն կ'երթամ և Լոնտոնէ  
տագիւր բոլոր կառախումբերը կը կեցնեմ:

ՏՐ. Կ.— Դրամի ա՛լ պէտք չունին, քանզի  
տան մէջ ունեցածիս բոլորը գողցիր են. դրա-  
մարկդին մէջ զնեւու մուցեր էի գրասր:

ՊՐԷՆՏ.— Սրիկանե՛ր ձեզ: Ո՛հ, սպասեցէ՛ք,  
սպասեցէ՛ք: (Իռաւ կ'եղէ):

Վիւր.— Կեցի՛ր, Պրէ՛նտ, չե՛ս կրնար, հեռա-  
գրաթիւը կարած է, ճամբուն վրայ ինկած տե-  
սայ քիչ մ'առաջ: Ժամանակը լաւ որոշած են,  
Հիմա Ալվէրսթօն հասած ըլլալու են: Քաղաք  
գացող ձեպընթացով պիտի երթան, ուրիշ կա-  
ռախումբ ալ չի կայ վեց ժամու համար, ո՛չ ալ  
երկաթուղւոյ հեռագրաթիւ՝ արգիլելու համար:

Եւրոպական ձեպընթացը Տովրր պիտի հասնի  
— նոյնիսկ եթէ սովորական ճամբէ մ'իսկ երթալու  
չափ անխելքները լլան — մենք զանոնք զարմնելէ  
առաջ, քանզի մղոններով տեղ ունինք մինչև որ  
ամէնամօտ հեռագրատուն հասնինք: Աստուած  
իմ:

ՏՐ. Կ.— Ի՞նչ է:

Վիւր.— Տեսայ զանոնք: Կծիկը դրած գիւղին  
փայտքօնը կը քչլին հոսի ճամբէն՝ երբ բարձ-  
րաւանդակին վրայէն տուն կուգայի կարծ ճամ-  
բէն: Խտաւցին կը քչլը կառքը և կինը նստած  
էր:

ՊՐԷՆՏ.— Ա՛լ մի խօսիր, տէ՛ր իմ, գրեթէ  
խելացնոր եմ:

ՏՐ. Կ.— Դո՛ւն ես ասոնց ամէնուն պատ-  
ճառը: Ի՞նչ իրաւունքով աղջնակը մինակ ձգեցիր:

Վիւր.— Մի՛ պատասխաներ Պրէ՛նտ: Սաստիկ  
վշտացեր է:


ՊՐԷՆՏ.— Աստուծո՛յ օգնութեամբը պիտի  
ձեռք անցնեմ զ'ինքն:

ՏՐ. Կ.— Մարգարիտ, սրբելի՛ս, թանկագին  
կոյր հրեշտակ, կորցուած ինձմէ, կորսուած:  
Տէ՛ր, օգնէ՛ ինձ և Տէ՛ր, օգնէ՛ անոր:

(ՏՐ. Կ. սեղանին վրայ կ'իյնայ, երեսին  
վրայ: Վիւր փոքր կը կենայ ջանալով  
սփոփել: ՊՐԷՆՏ՝ պատահանին ֆով:  
Տեսարան մը անկարող գայրոյթի:

=( Պ Ա Տ Կ Ե Ր ) =





**ՏԵՍԱՐԱՆ.**— Գեղեցկօրէն յարդարուած  
պանդոկաստան մը, Վիեննայի մէջ:

**ԱՌՏՈՒ.**— ՓՐԻՆՍ ՔԻՅՐԻԱՆԻ  
կարդալու եւ ծխելու վրայ:

**ՓՐԻՆՍ.**— (Օթոցին վրայ նստած): Ճշմարիտ  
որ յաջողակ գործ մըն էր, եւ կ'արժէ՛ անոր հա-  
մար վտանգի տակ մտնել. սքանչելի է. այնպի-  
սի՛ գլուխ մը, այնպիսի՛ կերպարանք մը, այնպի-  
սի՛ ձայն մը: Եթէ ողջ մնանք եւ հետքերնիս կոր-  
սընցնելով Սպանիա անցնինք, ապահով պիտի  
ըլլանք հոն, յուսամ. իտալիայէ վախճալ հոգս  
անգամ չէ, արուեստագէտը թո՛ղ գայ հոս, եթէ  
կ'ուզէ՛ թող ցոյցեր ընէ: Կարծեմ հետքը կոր-  
սընցուցած եղանք զարտուղի ճամբայէ մը գա-  
լով:

(Կը մտնէ Սալվատօրա):

Աղէ՞կ է:

**ՍԱԼ.**— Չէ՛, խելացնոր է կամ թէ յամառ:

**ՓՐԻՆՍ.**— Հաւանական է երկուքն ալ. յոգ-  
նած է թերեւ: Երգելը լսեցիր:

**ՍԱԼ.**— Անգամ մը միայն, սակայն մի քանի  
տողաչափէ վերջ՝ դադրեցուց:

**ՓՐԻՆՍ.**— Լաւ ձայն ունի՞:

**ՍԱԼ.**— Սքանչելի՛, թէպէտ տկար է տակաւին:

**ՓՐԻՆՍ.**— Տկա՛ր է, յուսամ ազնիւ կը գըա-  
նուիք իրեն հանդէպ. լա՛ւ է ազնիւ վարուիք:

**ՍԱԼ.**— Անտարակոյս, լաւ է, առաջին ան-  
գամուն:

**ՓՐԻՆՍ.**— (Ոտի կ'ելլէ դէպի վառարան երթա-  
լու): Այո՛, այո՛ կրնանք մեր ծրագիրը փոխել  
յետոյ, սակայն դող հանելու չէ զայն. սիրունիկ  
աղջնակ մըն է, Սպանիա պէ՛տք է տանինք. եւ  
անով ազնուականները հիացնենք, միայն թէ,  
մեր դրամը բաւէր:

**ՍԱԼ.**— Մուրհակները գանձեցի:

**ՓՐԻՆՍ.**— Պէ՛տք է. ուրիշէ՛:

**ՍԱԼ.**— Անգղիական դրամատունէն: Ամէն ինչ  
չիտակ ըրած կը խորհէին, այդպէս կը թուէր:

**ՓՐԻՆՍ.**— Ուրեմն երկար ատեն մնալու չենք  
հոս:

**ՍԱԼ.**— Չե՛ն կրնար գտնել, առնուազն երեք  
օր ճամբորդութիւն ընել ստիպուած են մեզ գըա-  
նելու համար եւ մենք չատոնեց հեռացած պիտի  
ըլլանք, սակայն պէ՛տք է որ գիշեր մը քնանայ  
Այտան:

**ՓՐԻՆՍ.**— Շա՛տ լաւ:

(Կը մտնէ սպասաւորը ձախէն):

**ՍՊԱՍ.**— Ասպետ Վանտօ՛մը կուգայ:

**ՓՐԻՆՍ.**— Ողորմա՛ծ Աստուած, բռնուեցա՛նք,  
բռնուեցա՛նք, կը լսե՛ս:

**ՍԱԼ.**— Շա՛տ ուշ: Ահա՛ կուգայ: Անակնկալ  
մ'է ալս: Եկա՛ւ Ասպետը:

Կը մտնէ Վանտօ՛մ ձախէն, կուգայ ՍԱԼ. ի  
մօս Կարճահասակ մեկը, ցղային շարժու-  
մեւերով, քազէի նման սրտեսն իր նայ-  
ուածքին մէջ:



(Կը լեկնի սպասաւորը, ձախեմ):

ՎԱՆՏ.— Պժն-ժն-ժն մատամ: Ա՛հ, փրի՛նար: Այս է նախկին բարեկամիս Անթօնիոյի ներկայ անունը:

ՓՐԻՆԱ.— (Ձղագրգիռ): Այո՛, այո՛:

(Դեպի անոր կ'երթայ):

ՎԱՆՏ.— Ա՛հ, ժամանակները այսպէս կը փոխուին, անուններն ալ կրնան փոխուիլ:

ՓՐԻՆԱ.— Ի՞նչպէս գտաք մեզ. ի՞նչ կուզէք:

ՎԱՆՏ.— Կամայ կամաց, փափկութեամբ, մէկիկ մէկիկ հարցուցէք: Մատամ, գունատ էք:

(ՍԱԼ-ի աջ կողմը կանգնած):

ՍԱԼ.— Ո՛հ, ո՛չ:

ՎԱՆՏ.— Շատ գունատ էք: Դրամատուներ տաք էր այսօր:

ՍԱԼ.— Դրամատո՛ւներ:

ՎԱՆՏ.— Այո՛, Անգղիական դրամատուներ:

ՓՐԻՆԱ.— Հոն գտնուեցա՞ք, Մատամ:

ՎԱՆՏ.— Ո՛հ, Մատամը երկար մնաց հոն: Մատամը քանի մը մուրհակներ ունէր փոխանակուելիք: Ձեզի սակը բարձր է Վիեննայի մէջ: Մատամը խիստ բնականօրէն հակառակեցաւ զեղչին. եթէ Մատամը աճապարանքի մէջ գըտնուէր՝ աւելի կասկածելի կը դառնար: Մատամը ճշմարիտ արուեստագիտունի մըն է:

ՓՐԻՆԱ.— Լա՛ւ:

ՎԱՆՏ.— Այո՛, լա՛ւ, քսան հաս յիսուն ոսկինոց մուրհակ: Հաղար ոսկի, անգղիական դրամով. նուազ՝ զեղչը, բաժնուելիք դումար մըն է: Ես մէկ հոգի եմ և դուք՝ երկու, սակայն մէկ համարեցէք: Բաժնե՞նք:

ՓՐԻՆԱ.— Բաժնե՛նք:

ՎԱՆՏ.— Վա՛՛՛, բաժնե՛նք: Եթէ ոչ, դրամատուներ անտարակոյս գիտ կը վարձատրէ յրատու-

ու թեանս համար: Բարեկամներ, դուք՝ ինծի Վեներիկի մէջ անցեալ տարի — փոքրիկ — այնպիս չէ՞ք կոչէր, ցած, վարնոց խաղ մը խաղացիք: Դո՛ւք, համեստ Անգղիացիներէ խիստ պէտքը զգացուած ոսկիի խոշոր աւանդ մը ձեռք անցնելու վարպետութիւն մը դուին հանեցիք: Մենք շահակից էինք և դուք՝ ընկերութիւնը լուծեցիք առանց փորձակշռի, այս համեստութիւն էր միթէ, անա՛նկ կը կարծէք: Արդ, ընկերութեան վաղեմի բաժինս պահանջել կուզեմ, փորձակշիռ մը կուզեմ. ի՞նչ կրնաք ըսել ասօր:

ՓՐԻՆԱ.— Քեզի հարիւր ոսկի կուտանք, այս է մեր ընել կրցածը:

ՎԱՆՏ.— Ա՛հ, այդ բաւական չէ, տեսէ՛ք հոս խիստ բարձր պաշտօնի մը վրայ կը գտնուիմ: Ես՝ Թատրոնի Գործադիր Ժողովին փոխ-տնօրէնն եմ, այո՛, այդ խոշոր ազգային հարստութեան: Մեծ է ան՝ թոշակը քիչ է, քիչ կը համարուի, թէպէտ պատուաւոր եմ: Մատամի պատմութեանէն խիստ փոքրիկ մաս մը դրամատան՝ Անգղիական դրամատան պատմել, պիտի աւելցնէ պատուաւորութիւնս: Այդ բանը շարադրելու համար 200 սթէրլինի չափ գումար մը կ'ստանամ. նախատիպը չինելու համար ճիշդ կրկինը կը պահանջեմ, մասներու երկու շարժում՝ ահա՛ դրամը: Երկու անգամ քե՛ս՝ քե՛զ կ'ընէ ամբողջ օրհնեալ աշխարհի վրայ, իբաց առեալ Սպանիայէ, ուր հինգ կ'ընէ: Սպանիան մէկգի թողունք, խօսեցէ՛ք, մտիկ կ'ընեմ:

ՍԱԼ.— Անշո՛ւշտ, Ասպետ, պէ՛տք է որ վճարենք Ձեզի:

ՎԱՆՏ.— Անշո՛ւշտ:

ԻՇԽ.— Ահա՛ դրամը, աւագա՛կ քեզի:

ՎԱՆՏ.— Ո՛հ, կ'առա՛կեմ. կ'առա՛կեմ. ոտո-







ՎԱՆՏ.— Խիստ գոհ մնացի: (Սալ. ի ֆոլ կ'եր-  
թայ): Մամ' զէլը նոր բան մը չի պատմեց ինծի:

ՓՐԻՆՍ.— Ի՞նչ բնաւորութիւնս ինչպէս է:

ԱՅՏԱ.— Յիշուելու արժանի բան մը չունիք:

ՎԱՆՏ.— Իսկ Մատամը (կես նենգօրէն):

ԱՅՏԱ.— Կորուսած է եթէ երբէք ունէր իսկ:

ՎԱՆՏ.— Հա', հա', Կո'-Բ, կոյր, յիրաւի (խըն-  
դուք կը զսպե):

ՍԱԼ.— Կը բաւէ՛ ալ պէտք չունի՛նք յանձ-  
նապատանութիւններու: (Քիչ մ'անցիկն կ'երթայ):

ԱՅՏԱ.— Ես հայրենիք երթալ կ'ուզեմ, Անգ-  
ղիա գտնուող մտերիմներուս քով: (Բեմին վրայ  
կը թափառի):

ՎԱՆՏ.— Հօ', հօ':

ՍԱԼ.— (Մեկուսի, Վանս. ի մօտենալով): Աս-  
պե՛տ, այս գիշեր պիտի գա՞ք այս խնդրի մասին  
տեսակցելու համար:

ՎԱՆՏ.— Խաղերու աւարտումէն յետոյ: Այո՛,  
(Մեկուսի): Յարմար է, ուսկի՞ց գտաք:

ՍԱԼ.— Լռէ՛, լռէ՛, պիտի ըսեմ, խելացնոր է,  
իր հաշմանդամութիւնը այսպէս կ'ընէ զինք:

ՓՐԻՆՍ.— Հոս ձգենք, երթանք գուրսը խօ-  
սակցինք. «մնա՛ք բարով» մի՛ ըսէք, նոպայ  
ունի:

ՎԱՆՏ.— Լա՛ւ հսկեցէք: Կը ցաւիմ որ մուր-  
հակներու փոխարէնը ստացաք այսօր, ա՛լ հոս  
չէք կրնար կենալ: Ուրիշ տեղ մը փորձելու եմք:  
Այս տեղի պաշտօնէս կը հրաժարիմ և Ձեր հետը  
կ'երթամ: «Կոյր երգչուհի» նոր թատերգութեան  
երգն ու թատերատեսուրը ունի՛մ և ա՛հա՛ երկին-  
քէ ձգուած Յաւէրթահարսը:

ՍԱԼ.— (Աջակողմ կ'անցնի): Միւս սենեակը  
խօսակցինք, եկէ՛ք: (Դուրս կ'երթան աջեմ):

ԱՅՏԱ.— Վիէննա՛. կը լսեմ թաւալգոր Դա-  
նուրի ձայնը: Երջանի՛կ գետ, իր հարկատու գե-  
տակներէն պարտադրեալ՝ բոլո՛րն ալ ազատ,  
բոլո՛րն ալ վճիտ, մինչև որ մարդերու բնակա-  
րաններուն հասնին. հո՛ն կը պղտորին, կ'արա-  
տաւորին, ա՛լ մաքուր չեն, ոչ ևս: Խոշոր սենեակ  
մը, գուրս գացին, ի՞նչ կուզեն ինձմէ, ի՞նչ ընել  
կուզեն ինծի (աջակողմի դրան ֆոլ): Ուրիշ գուռ  
մը, արգիօք ո՞ւր կը տանի, զով օդ, պատշգամբ  
ըլլալու է. արգիօք կրնա՞մ մտնել, ո՛հ հրաշալի  
օդ. որքա՛ն ջերմ, թէպէտ՝ Շէլքօմի օդէն որքան  
տարբեր, երանի թէ անգամ մը տեսնէի: Երանի  
թե ձայնս մարե՛ր և ճատողութիւնս վերադառնաւ:  
Սիրելի՛ Սինեօր՝ արգիօք ի՞նչ կ'ընէ հիմալ, իսկ  
Վի՞րը, Պրէ՞նտ, սիրելի ժիր Պրէնտ, վազեմի հա-  
ւատարիմ Հէրքիւլէս, արգիօք ինչո՞ւ տունը մը-  
նացած էր զիս պաշտպանելու համար: Ա՛հ սի-  
րելիս, թշուառ եմ, կոյր, անոք, որքա՛ն լքեալ  
արարած մըն եմ. այս մարդիկը՝ իրենց վայրենի,  
օտար խօսակցութիւններովը որքա՛ն կը նեղեն  
զիս, ինչպէ՛ս կ'ահարեկին զիս:

(Պատշգամբին վրայ կը պսո՞սի):

Կը ճռէ Փրինս Բէբընէն, Բէթի Իւրը:

ՓՐԻՆՍ.— Ո՞ւր գացած է: Հօ', հօ', պատըշ-  
գամին վրայ: Յուսամ ոչ ոք պիտի տեսնէ զայն:  
Այլանդակ ոտնաձայն մը կայ սանդուխին վրայ,  
գուռը գոցեմ, աւելի ապահով է:

(Պատշգամբին դուռը կը գոցե, կը կոպե,  
բանալին կը գրպանե: Կը մտնէ ՊրէնՏ ձախակող-  
մէն. շիփ շիսակ եւ խոժորադեմ. խոշոր գաւա-  
զան մը. հաստատակի դիմագիծ, պաշտօնը կը



պարզե յայննապես, անկասկածութիւն անոր մասին):

ՓՐԻՆՍ.— Ո՞վ էք դուք:

ՊՐԷՆՏ.— Հէրքիւլէս Պրէնտ, Անգղիական հըրաժարեալ թիկնապահ կարծեմ առաջ հանդիպեցանք իրարու:

ՓՐԻՆՍ.— Ձե՛մ յիշեր:

ՊՐԷՆՏ.— Ո՛հ, այո՛, հանդիպեցանք, Շէլքօ՛մ հանդիպեցանք, Անգղիոյ մէջ, երկու շարաթ առաջ, կը ճանչնամ Ձեզ:

ՓՐԻՆՍ.— Ձե՛մ հասկնար թէ ի՛նչ ըսել կ'ուզէք:

ՊՐԷՆՏ.— Այո՛, կը հասկնաք, Փրինս Քիրրիանի: Ո՛ւր է Օրիորդ Այտան:

ՓՐԻՆՍ.— Ո՞վ:

ՊՐԷՆՏ.— Օրիորդ Այտան, Պարո՛ն Փրինս, հոս ըլլալը գիտեմ, պատշգամբին վրայ տեսայ զինք:

ՓՐԻՆՍ.— (Մեկուսի): Ա՛յ խե՛րդ անիծեմ: Ձե՛մ հասկնար ի՛նչ ըսել կ'ուզեա:

(Կը նստի սեղանին իմ):

ՊՐԷՆՏ.— Փրինս Քիրրիանի՛, ես ծերուկ զինուոր, մըն եմ և հա՛, հա՛, հաստ գաւազան մը բերեր եմ, կ' կ' կը՛ կը՛ կատղած եմ հա՛: Եթէ գանկիդ ջախջախուիլը չես ուզեր կը յանձնարարեմ որ հետս լաւ վարուիս:

ՓՐԻՆՍ.— Անա՞նկ է, կը կարծե՞ս թէ՛ կրնաս սպառնալ, որովհետեւ Անգլիացի մըն ես. չէ՛, կարծեմ քեզի կ'ըսեմ թէ հոս այդ անունով մէկը չի կայ, քու փնտռած գեռաւոր օրիորդդ հոս չէ՛:

ՊՐԷՆՏ.— Սակայն ես գիտեմ թէ հոս է:

ԱՅՏԱ.— (Իրեան): Պրէնտ, սիրելիս, քո՛ւ ձայնդ է:

ՊՐԷՆՏ.— Հա՛, այո՛, Օրիորդ Այտան, ուրա-

խաղի՛ր սիրելիս, Պրէնտը հո՛ս է, ո՛ւր ես Օրիորդ Այտան:

ԱՅՏԱ.— Պատշգամբին վրայ:

ՊՐԷՆՏ.— (Կը մօտենայ): Դուռը բա՛ց, Փրինս, թէ ոչ թաց փայտով լա՛ւ կը բանաս:

(Կը մտնէ վանսում աջեմ):

ՎԱՆՏ.— Ատ ի՞նչ է:

ՊՐԷՆՏ.— Ուրիշ սապեա մըն ալ, շա՛տ լաւ: Ձեր երկուքի՛ն ալ կը բաւեմ:

ՓՐԻՆՍ.— Սա լիակած Անգղիացին աղջկանս տէր կ'ելլէ:

ՊՐԷՆՏ.— Ինչի՞դ:

ՓՐԻՆՍ.— Աղջկանս:

ՊՐԷՆՏ.— Քե՛զի ստախօս, Իտալացի աւանա՛կ:

ՎԱՆՏ.— Խնդիրը շատ պարզ է. ուստիկան կանչեցէ՛ք:

ՊՐԷՆՏ.— Ո՛վ որ կ'ուզէք կանչեցէք: Արգար պահանջք մ'ընելու հանգամանքը ունիմ: Կանչեցէ՛ք, պարոն սրիկայ, դո՛ւն և քու իտալացի շունդ հոս՝ շատ չանցած պիտի հասկնաք գաւազանիս ոյժը:

ՓՐԻՆՍ.— (Վանսումի իմ կ'անցնի): Ի՞նչ պիտի ընենք:

ՎԱՆՏ.— (Պրէնտ շնչ կը կեղծե եւ շնչ չուզել կը ձեւացնէ): Ներսի սենեակը պատշգամ կը տանի, այդ դռնէն և ետեի սանդուխէն դո՛ւրս փախցուր:

ՊՐԷՆՏ.— (Վեր ցատկով): Հօ՛, հօ՛, երկու հոգի կրնան խաղալ այդ խաղը: (Ներս կը խուժե աջակողմէն: ՎԱՆՏ. բանալին կը դարձնե եւ կը կռնէ):

ՎԱՆՏ.— Ծուրակին մէջ ինկաւ: Քե՛ւր սա՛րի մը մէջ է: Պատշգամբին դուռը բա՛ց, դո՛ւրս հանէ Այտան:



ՓՐԻՆՍ.— (Բանալին կը խոթէ պատշգամին դռան, կը կոնչէ): Լա՛ւ եղաւ, Ասպե՛տ, վարպետութեն թակարդը ձգեցինք:

ՊՐԷՆՏ.— (Ներսէն): Պիտի կտորեմ գուռը:

ՎԱՆՏ.— Շո՛ւտ, չո՛ւտ, հիմայ կը բանայ: Դո՛ւրս տար, սանդուխէն վար:

ԱՅՏԱ.— Տեղէ՛ս խկ չեմ շարժիր: (Բարձրագոյն զոչեղով): Պրէ՛նտ, սիրելի՛ս:

ՊՐԷՆՏ.— (Պռնալով): Պինդ կեցի՛ր, Օրիորդ Այսա, կուգամ: (Կատարեալ կը ջանայ դուռը կոտրել)

ՎԱՆՏ.— Տա՛ր: Ասպե՛տ, չո՛ւտ եղիր:

(ՓՐԻՆՍ դուռն կը բանէ Այսան: Այսա կուրայ, կը կանչէ: Կը բանին ձախէն եւ դուռը կը կղպեն դրսէն մինչ Պրէնտ միւս դուռը կը կոտրէ եւ ներս կը խուժէ):

ՊՐԷՆՏ.— Դա՛րձեալ փախցուցինք. Աստուած իմ, անգամ մը որ ձեռք անցնեմ: (Սենեակին դուռը բանալ կը փորձէ, գոյրացած պատշգամին կը վազէ):

Հուրբա՛, ահա Տօքթորը և Պարոն Վիր, փողոցին մէջ (բարձրաձայն կանչեղով) Տր, Կլովըր վե՛ր եկուր, չուտ վե՛ր եկուր, եկո՛ւր, տէ՛ր իմ, Պարոն Վիր, այս տան մէջ է, վե՛ր եկուր, վե՛ր եկուր: Տունը պիտի փլցնեմ և Այսան պիտի գտնեմ: (Զանգակը կը հնչէ սասիկ, ձախալողով դուռը կը բացուի կը մտնեն Փրինս եւ ուսիկան):

ՓՐԻՆՍ.— Ահա՛, սա՛ մարդն է, Պարոն Տեղակալ:

Տե՛ղ.— Քեզ կը ձերբակալե՛մ. Ի՞նչ գործ ունիս հոս:

ՊՐԷՆՏ.— Ե՛ս Անդղիացի մըն եմ, հին զինուորական մը՝ Հէրքիւլէս Պրէնտ:

Տե՛ղ.— (Մեկուսի): Հէրքիւլէս Պրէ՛նտ, հա՛յկէ՛, Ի՛նչ անականկար:

ՊՐԷՆՏ.— (Սասիկ բարկացած): Հոս եկած եմ, սա մարդէն պահանջելու Անդղիացի տոնաւանդուած դեռտոնի Անդղիացի օրիորդ մը:

Տե՛ղ.— (Խիստ ցածեւ Պրէնտի ականջին): Հա՛նգի՛ստ եղիր, ձօ՛ննի:

ՊՐԷՆՏ.— ձօննի՞:

Տե՛ղ.— Լռէ՛, հո՛ս եկուր: (Զախակողմէն քիչ մը անդին կ'երթան):

ՎԱՆՏ.— (Փրինսի բով): Տեղակալը խկոյն բաժինը պիտի տայ:

ՓՐԻՆՍ.— Անանկ է, յուսում թէ, տւանա՛կ քեզի:

Տե՛ղ.— (Բեւեռն վրայ): Լռէ՛, ես ֆէրախնանոն եմ, Ափրիկէն, կը յիշե՛ս զիս:

ՊՐԷՆՏ.— Ի՞նչ, Ափրիկի:

Տե՛ղ.— Զեղի խայտառակներ, զիս ալ այդպէս կը կռչէիք: Ես՝ քու բարեկամդ եմ, ձօննի. սա կայն մի՛ դիմադրեր, պէ՛տք է որ պարտականու թիւնս կատարեմ, յետոյ կ'օգնեմ քեզի, չա՛տ պիտի օգնեմ քեզի, կը տեսնես:

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ, լա՛ւ, կը վստահեմ քեզի Սրբուրբի, բարեկամ՝ կը վստահեմ Զեղի:

Տե՛ղ.— (Կ'անցնի): Այսպէ՛ս, լա՛ւ, պարտա՛յք, բռէ՛ք ինձ Զեք գանդալը:

ՎԱՆՏ.— Փրի՛նս, խօսէ՛ Տեղակալին:

ՓՐԻՆՍ.— Սա Անդղիացիին դէմ պաշտօնապէս կը գանգատեմ, գոր երբէք տեսած չեմ:

ՊՐԷՆՏ.— Ի՞նչ:

Տե՛ղ.— Լռեցէ՛ք, պարոն:

ՊՐԷՆՏ.— Լա՛ւ, լա՛ւ, Ափրիկի:

Տե՛ղ.— Այս Անդղիացին ու է պահանջք ունի՛ Զեղէ՛, Փրի՛նս:



ՓՐԻՆՍ.— Երբէ՛ք, ոչի՛նչ:  
ՏԵՂ.— Սա դեռատի աղջկա՞ն խնդիրը ինչ է սակայն:

ՓՐԻՆՍ.— Զո՛ւտ առասպել:  
ՏԵՂ.— Ո՞վ կը ճանչնայ այս Անգղիացին:

(Կը մտնեն ՏՐ. եւ ՎԻՐ):

ՏՐ.— Մենք կը ճանչնա՛նք:  
ՊՐԷՆՏ.— Ա՛հ Տոթթո՛ր, սիրելի՛ս, ա՛հ Պր. Վի՛ր:  
ՓՐԻՆՍ.— Ա՛յ, խերերնի՛դ անիծեմ:

ՏԵՂ.— Ո՞վ են այս պարոնները:  
ՎԻՐ.— Ե՛ս՝ Պր. Վիր Ֆուլլըր կը կոչուիմ, արուեստագէտ Ա՛յս՝ Տր. Կլովըր, բժիշկ. և սա ալ...

ՊՐԷՆՏ.— Հէրքլուէս Պրէնտ, հրաժարեալ թիկնապահ:

ՎԻՐ.— Ծի՛շդ այդպէս, և անձնական ծառան եմ սա վաղեմի բարեկամիս Սա սրիկային հետքը հալածեցինք (Փրինսը ցուցնելով): Լոնտոնէ Բարիզ և անկից ալ Վիէննա, և հիմա ձեռք անցուցինք:

ՓՐԻՆՍ.— Ես ի՞նչ ըրած եմ:

ՎԻՐ.— Դուք դեռատի օրիորդ մը առեանքեցիք Շէլքոմէ, Անգղիա, կոյր աղջիկ մը, տասնեւինը տարեկան, և հիմայ հոս կը գտնուի:

ՓՐԻՆՍ.— Իրա՞ւ, ե՞րբ գործեր եմ այս առեւանգումը:

ՎԻՐ.— Երկու շաբաթ առաջ:

ՎԱՆՏ.— Անկարելի է, Փրինսը երկու շաբաթ առաջ քո՛վս էր:

ՏԵՂ.— Ձե՞ր քովը, Ասպի՛տ:

ՎԱՆՏ.— Ի՛մ քովս, Տեղակալ:

ՏԵՂ.— Կրնա՞ք ապացուցանել:

ՎԱՆՏ.— Կատարե՛լապէս:

ՏՐ. Կ.— Հոգս չէ քու ապացուցանելդ, միայն

թէ կը ստեա եթէ ըսեա թէ՛ այդ մարդը հոս կը գտնուէր երկու շաբաթ առաջ:

ՎԻՐ.— Փրինս Քիբրիանի և Սալվատորա Տիւլլոս, անձանթներ և էրիկ-կնիկ ապրողներ, Սոհօ, Զըրչ փողոց բնակեցան երեք ամիս և խաղամուլութեամբ ժամանակ անցուցին: Անցեալ ամսուան 28 ին Շէլքոմ գացին հարուստ պատանիի մը հետքը գտնելու, ուր կը կարծուէր թէ գրամ կը պարտէր իրենց: Այսօր տմոյն 12ն է, հետեւարար երկու շաբաթ առաջ հոս չէին:

ՎԱՆՏ.— Սոսկ առասպել է, երիտասարդ պարոն, երբ Անգղիացի պատանի մը կը ջանայ առասպելաբանել, ամէնէն մեծ չարիքը կրնայ յերկրել իր երեակայութեամբը:

ՏԵՂ.— Պարոններ, Ասպիտ վանսօմ քաջա՝ ծանօթ է հոս: Կր վստահացնեմ Ձեզ որ պիտի քննեմ այս խնդիրը, սակայն կոյր աղջկան համար կ'ըսէք թէ հո՞ս է:

ՓՐԻՆՍ.— Հոս կոյր աղջիկ չիկայ:

ՊՐԷՆՏ.— Սո՛ւտ է, պատշգամին վրայ էր և ինծի կանչեց, լսեցի՛ ես, յետոյ սա սենեակը անօգուտ տեղ փնտռել զրկեցին զիս և օրիորդը փախցուցին, երբ ներս բանտարկուած էի. ան կրկին կանչեց զիս:

ՏՐ.— Ա՛հ:

ՎԻՐ.— Սրիկաններ:

ՏԵՂ.— Կը թոյլատրէ՞ք, Փրինս, որ Ձեր բոլոր սենեակները փնտռեմ:

ՓՐԻՆՍ.— Ո՛հ, անտարակոյս:

ՏԵՂ.— Հի՛մա կը վերադառնամ, պարոնայք: Ձէ՛, Ասպի՛տ, քեզ չենք ուզեր (Երկու ուսիկաններու, որոնք թեւը կը կենան) Ուշադրութիւն րէք որ ո՛չ մէկ մարդ մեկնի սենեակէն մինչև որ վերադառնամ:



(Կը մեկնին Փրինս եւ Տեղ. nus.)

ՊՐԷՆՏ.— Գիտեմ հոս է, պիտի դառնէ:

ՎԱՆՏ.— Մեծ վատահուժիւն ունիս մեր ոստիկանին:

ՊՐԷՆՏ.— Այո՛, շատ վատահուժիւն ունիմ:

ՎԻՐ.— (Դեպի Պրենտ կ'երթայ ցածեմ): Հոս է:

ՊՐԷՆՏ.— Պատուոյս վրայ կ'երգնում, հո՛ս է:

ՎԱՆՏ.— Հոս կոյր օրիորդ չիկայ, բոլորովին կը սխալիք, շատ կը սխալիք:

ՏՐ. Կ.— Կը սխալի՞նք, տեսնենք: (Կը նստի օթոցին վրայ):

ՎԱՆՏ.— Իսկ խեղճ Փրինտի երկու շարաթ առաջ Անգլիոյ գտնուելը, անկարելիութիւն, բացի օդապարիկով: Անկարելիութիւն:

ՊՐԷՆՏ.— Դարձեալ կը ճոռոմարանես: Սրիկա՛յ քեզի կ'ըսեմ՝ թէ կը ճանչնամ Օր. Այտայի ձայնը, լսեցի՛ իր ձայնը, սապէս կը կանչէր, Պրէ՛նտ դո՞ւն ես, Պրէ՛նտ, լսեցի՛ ես:

ՎԱՆՏ.— Հա՛, ի՞նչ բան լսել պիտի չի ձեւացնէիր: Լա՛ւ, թատրոն երթալու եմ:

(Երթալու միջոցին ձախեմ, Պրենտ կը կեցընէ զինք):

ՊՐԷՆՏ.— Մեզ հոս ձգելով չես կրնար երթալ, Տեղակալը ըստ թէ կենալու ես, հո՛ն սպասեցէք եթէ կը հաճիք:

ՎԱՆՏ.— Յիրաւի, այդ բանը օրօշել ոստիկանին կը վերաբերի: Կրնա՞մ երթալ:

ՈՍՏ.— (Ետեմ): Չէ՛, պարտն, ո՛չ, մինչեւ որ մեր պետը վերադառնայ:

ՎԱՆՏ.— Օհո՛, այնպէ՞ս է, ուրեմն գոնէ պաշտօնդամ երթամ, այս տեղ տաք է: (Կ'երթայ)

ՊՐԷՆՏ.— (Վիւրի): Սպան կը ճանչնամ:

ՎԻՐ.— Դո՞ւն:

ՊՐԷՆՏ.— Այո՛: Ձիա պիտի բանաորկէ, աւելի լաւ աւելի կը ծանօթանամ հետք, Ափրիկէի մէջ սապետներ էին: Ձինք Սվուիբի կոչել սովորած էինք, ապի գիտնալը մի՛ հասկցնէր, նայէ՛ կուգան:

(Կը մեկնեն Տեղ. ՈՍՏ. ՓՐԷՆՏ եւ ՍԱԼ.:

ՓՐԷՆՏ օճախին ֆոլ կ'երթայ):

Տեղ.— Ո՞ւր է Ասպետը:

ՈՍՏ.— Պատշտակին վրայ, պարտն Սպայ:

Տեղ.— Հա՛, դուրս պիտի ձգենք զայն, այդ սպանով է (կ'երթայ դուռը կ'ընկնէ):

ՊՐԷՆՏ.— Հա՛, հա՛, լա՛ւ եղաւ, Սվուիբի:

Տեղ.— Լո՛ւէ՛:

ՏՐ. Կ.— (Ոտի կ'եղէ) Տիկի՛ն, ո՞ւր է խեղճ քեռակճիկս:

ՍԱԼ.— Չե՛մ գիտեր, պարտն:

ՎԻՐ.— Ո՛հ, Տիկի՛ն, մի՛ ընէր, Չեղ կը ճանչնամ, գոնէ դո՛ւք Շէլքոմ էիք:

ՍԱԼ.— Այո՛, Շէլքոմ գտնուեցայ:

Տեղ.— Փրինտի՞ն հետ:

ՍԱԼ.— Ո՛հ, չէ՛, սիրելիս:

ՏՐ. Կ.— Տիկի՛ն, միտտեղ հո՛ն էիք:

ՍԱԼ.— Ո՛հ, ո՛չ, եղբորս հետ էի հոն:

ՏՐ. Կ.— Եղբայր չ'ունի՞ք դուք:

ՍԱԼ.— Ինչպէ՞ս կրնաք գիտնալ, Սինեօ՛ր:

ՏՐ. Կ.— Ծշմարի՛տ, ես չա՛տ լաւ գիտեմ, դուք եղբայր չ'ունիք:

Տեղ.— Լա՛ւ, չեմ կրնար կարգադրել այս սղդականութեան խնդիրները, կոյր աղջիկը չի կայ ապա չէնքին մէջ, եթէ երբեք դառնուեցաւ ալ:

ՓՐԷՆՏ.— Հա՛, հա՛, այսպէս այդ փոքրիկ առասպելը ջուրը կ'իջնայ:

ՏՐ. Կ.— Ո՞ւր կրնայ ըլլալ:



ՏԵՂ.— Ձե՛մ կրնար գիտնալ, աւելի լաւ է որ Ձեր Հիւպատոսարանը դիմէք այս խնդրին համար։ Սա մարդուկը պէտք է որ իմ մարդերուս ընկերանայ, չենք կրնար թողուլ որ այս քաղաքի ազնուատոհմ այցելուները կնճռատութիւններու հանդիպին ամէն նախապէս զինուորական եղողներու կողմէ, որ կը կարծէ թէ պատշգամբին վրայ ծանօթ դէմք մը տեսած ըլլայ։

ՊՐԷՆՏ.— (Տր. ի եւ վիրի ուժգին խփեցով աջ-  
ֆերը)։ Ձեզ պիտի ընկերանամ, Տեղակալ։

ՏԵՂ.— Փրի'նս, դուք և Մատամը երկար ա-  
տեն պիտի մնա՞ք վիէննա։

ՍԱԼ.— Ո՛հ, այո՛ տեղակալ։

ՏԵՂ.— Լա՛ւ, պիտի խնդրէի որ դատ բանա-  
լիք այս Անգղիացիին դէմ։

ՓՐԻՆՍ.— Ես հո՛ս պիտի մնամ, Տեղակալ։

ՏԵՂ.— Աւելի լաւ էր որ իրենց բանտարկեա-  
լին հետ միասին երթային։ Այժմ, պարո՛ն, եթէ  
կը փափաքիք ոստիկաններս Ձեզի կ'ընկերանան։

ՊՐԷՆՏ.— Պատրաստ եմ։ Ինձի երաշխաւոր  
պիտի ըլլաք, Տոքթո՛ր։

ՏՐ. Կ.— Անմիջապէս, երբէ՛ք մի վախնար։

ՎԻՐ.— Հե՛տդ պիտի երթանք, Պրէ՛նտ, Փրի'նս  
Բիբրիանի', կարծեմ յետոյ պիտի կրնանք հե-  
տերնիդ կրկին տեսակցիլ։

ՓՐԻՆՍ.— Կամքէս դուրս, կարելի է։

ՎԻՐ.— Ես Ձեզի՛ հետ ալ, Տիկի՛ն։

ՍԱԼ.— Կարելի է, պարո՛ն։ Ցախսութի՛ւն։

ՏՐ. Կ.— Բո՛հ, եկո՛ւր Վիր, եկո՛ւր։

(Կը մեկնին Պրեկնս, Տր. Կ., Վիր եւ ուսիկանը)։

ՏԵՂ.— Կը ծաւիմ որ այսպէս անհանգիստ ե-  
ղաք, Փրի'նս, կեցի՛ր, Բիբրիանի, այնպէս չէ՛։

ՓՐԻՆՍ.— Բիբրիանի։ (Օրոցին վրայ կը նստի)։

ՏԵՂ.— Իսկ Տիկի՛նը։

ՍԱԼ.— Ա՛ն ալ Բիբրիանի։ (Սեղանին տը կը  
նստի)։

ՏԵՂ.— Իսկ Տիկի՛նին եղբօրը անունը ի՞նչ է։

ՍԱԼ.— Եղբա՞յրս։

ՏԵՂ.— Այո՛, այն եղբայրը որ Անգղիա երթա-  
լու ատեն ընկերացու իրեն։

ՍԱԼ.— Ո՛հ, Կոմս Ֆէլիս։

ՏԵՂ.— Ո՛ւր կը բնակի։

ՍԱԼ.— Վենետիկ։

ՎԱՆՏ.— (Պաշտպանէ)։ Դուռը բացէ՛ք, եթէ  
կը հաճիք։

ՏԵՂ.— Օրհնեա՛լ Աստուած, մոռցայ, խեղճ  
Ասպետ, մինչև հիմա արեւուն տակ մնաց։

(Դուռը կը բանայ)։

ՎԱՆՏ.— (Կը մտնէ)։ Շնորհակալ եմ, Տեղակալ  
յիմարութիւն, ուշ մնացինք, ժամ մ'առաջ թառ-  
րոնի փորձին մէջ գտնուիլ կը պարտէի։

(Տեղակալի աջ կողմը կ'ուզայ)։

ՏԵՂ.— Ո՛հ, մի՛ աճապարէք, մի՛ աճապարէք,  
Պր. Փրի'նս պիտի հաճի՞ք սիկառ մը տալ արդեօք։  
(Դեպի Փրի'նս կ'երթայ)։ Եկո՛ւր, մեզ ընկերացիր,  
Ասպետ։ Տեսակցութիւննիս կարճ պիտի ըլլայ,  
սակայն այս բանը կրնայ շատ ծանօթութիւն գո-  
յացնել։

ՎԱՆՏ.— Ո՛հ, անշո՛ւշտ,

(Փրի'նսը սիկառ կը ձեռնէ. կը ծխէ)։

ՏԵՂ.— Չարմանալի բան, ո՛րքան ծանօթ կը  
թուի Մատամին դէմքը։ (Դեպի անոր կ'երթայ)։

ՍԱԼ.— Դէ՛մքս։

ՏԵՂ.— Այո՛, Մատամ։ Այսպիսի դէմք մը տե-  
սած եմ Տրէզորնի մէջ։

ՍԱԼ.— Տրէզորն։

ՏԵՂ.— Այո՛, Տրէզորնի մէջ։ Այն դէմքը որու



հետ շփոթեցի Մատամինը, բոլորովին զտրմանալի ազդեցութիւն մը յառաջ բերաւ:

ՍԱԼ. — (Ոսֆի կ'եղի): Ես հոն երբէ՛ք չի գլուտուեցայ, պարո՛ն:

ՏԵՂ. — Անտարակոյտ չէ՛, և արտառոց է այդ: Սակայն ծեր Անգղիացի Տաքթորի գէմքը, ճիշդ հիմա դուրս գացողը, նոյնպէս կը նմանէր հոն ճանչցած մէկ անձիս գէմքին:

ՓՐԻՆՍ. — Ո՛հ, այս նմանութիւնները բաւական բնական են:

ՎԱՆՏ. — Այնպէ՛ս է:

ՏԵՂ. — Ճի՛շդ, միւսնոյն ատեն ալ հետաքրքրական:

ՓՐԻՆՍ. — Իսկ Ձեր գէմքը ծանօթ է ինծի, Տեղակալ՛:

ՏԵՂ. — Ա՛հ, իրաւ:

ՓՐԻՆՍ. — Խիստ ծանօթ:

ՏԵՂ. — Դարձեալ Տրէզորնէ՞ն:

ՓՐԻՆՍ. — (Կ'եղի): Ո՛հ, Վենետիկէ:

ՏԵՂ. — Ո՛հ, այո՛:

ՓՐԻՆՍ. — Իսպախան, Ձեր բոլորն ալ իրատաշուրիք բնէլէ առաջ:

ՏԵՂ. — Կատարելապէս:

ՓՐԻՆՍ. — Այն ատեն այսքան Աւստրիական չէիք Ձեր համարումներուն մէջ, այնպէս չէ՞:

ՏԵՂ. — Շատ հին խնդիր մ'է, մոռցայ:

ՓՐԻՆՍ. — Իսկ յիշողութիւն մ'ունիմ:

ՏԵՂ. — Ե՛ս ալ: Իսկ դուք այն ատեն Քիրբխանի՞ կը կոչուէիք, այդ Վենետիկեան օրերուն երբ ես այդքան Աւստրիական չէի հիմակուանին չափ:

ՓՐԻՆՍ. — Երբէ՛ք:

ՏԵՂ. — Կամ ամէն անգամ որ խորհիմ, հա՛, աւելի լաւ է ձեռք քնացող շուները չ'ստնոն:

նան: Այժմ Քիրբխանի էք, բա՛ւ է այդ, այնպէս չէ՞ (Փրիկն կը խոնարհի) ճի՛շդ այդպէս:

(Կը մտնէ ոսկիակը նամակով մը):

ՈՍՏ. — Ստիպողական է, Պր. Պաշտօնակալ:

ՏԵՂ. — Շնորհակալ եմ. կրնաս երթալ:

ՈՍՏ. — Իսկ, Պր. Պաշտօնակալ: (Կը մեկնի ձախակողմէն): (ՎանՏօմ օճախիկն կը մօտենայ):

ՏԵՂ. — (Նախկին քանակով): Գործը միշտ մեր գլխուն վրայ կը դառնայ. պաշտօնագիր պաշտօնագրի ետեւէ (կը կարդայ, կը խնդայ): Հանգիստ չի կա՛յ չարերու: Շատ անգամ ըլլալու եմ: Այո՛, Վենետիկի, Փրինսի վրայօք:

ՓՐԻՆՍ. — Ո՛հ, կարեւորութիւն չ'ունի:

ՏԵՂ. — Տրէզորնի վրայօք պիտի խօսակցի՞նք, Մատամ՛:

ՍԱԼ. — Ո՛հ, շնորհակալութիւն, ո՛չ, յոգնած եմ: (Կը նստի):

ՏԵՂ. — Իսկ Ասպետ, դո՛ւք հարցումներ չունի՞ք:

ՎԱՆՏ. — Ո՛հ, ո՛չ, շնորհակալ եմ: Միայն թէ Ձեր պաշտօնագիրը կարեւոր է:

ՏԵՂ. — Քի՛չ մը:

ՎԱՆՏ. — Հետաքրքիր եմ:

ՍԱԼ. — Ե՛ս ալ:

ՏԵՂ. — Հետաքրքիր էք սակայն յոգնած, չա՛տ լաւ, կարդացէ՛ք Մատամ՛:

ՍԱԼ. — Պաշտօնական չէ՞:

ՏԵՂ. — Այո՛, բայց Մատամը կրնայ կարդալ, այսու հանդերձ: Գէշ գրուած է, բայց անտարաւոր Մատամը կրնայ կարդալ:

ՍԱԼ. — (Կ'սխալի): Աս ի՞նչ է: (Ոսֆի կ'եղի):

ՏԵՂ. — Կաղաչեմ կարդացէ՛ք:

ՍԱԼ. — Կոյր աղջկան վրայով է:

ՏԵՂ. — Ճշդի՛ւ:



ՍԱԼ.— Գտնուած է:

ՏԵՂ.— Կորսուած ալ է:

ՎԱՆՏ.— Իրա՛ւ

ՏԵՂ.— Ասպետ բռնուեցաք:

ՎԱՆՏ.— Ձէ՛, ինծի վերաբերող գործ մը չ'է: (Դեպի պաշտօն կ'երթայ, ետք ՏԵՂ. Ոս. իր ետև-  
րորդ խօսքը կը խօսի Ասպետը դուռը կը կղպե  
վրայէն ու բանալին կ'առնէ):

ՏԵՂ.— Քիչ մը Ձեզ վերաբերող խնդիր մ'ըն  
է, կարծեմ: Աղջիկը ասկէ Ձեր տունը տարուած  
է, վարձուած կառքով մը: Հոն հագուստները  
փոխուած է և Հարսուային ծեպընթացով մեկնած:  
Ինձ կը մնայ միայն հեռագրով դարձնել: Եւ Աս-  
պետը, Փրինսն ու Փրինսէսը կրնան բացատրու-  
թիւն տալ պաշտօնարանիս գլխաւորին, որքան  
շատ կամ որքան քիչ ծանօթութիւն որ ունին  
այս բոլորին վրայով:

(Ատմանակի ճոխնչ, ՏԵՂ. ուսիկանը յան-  
կարծ կը դառնայ):

ՓՐԻՆՍ.— Մի՛ շարժիր: Տեղակա՛ւ եթէ շար-  
ժեա կը կրակեմ: Հա՛, հա՛, դռները ամուր գոց-  
ուած են: Ծուղակը ինկաք: Ինծի մահիկ ըլլէ և  
հանդարտ կեցիր:

ՏԵՂ.— Կը համարձակի՛ք, Ձեզի չո՛ւն:


ՎԱՆՏ.— (Աջակողմի դռնէն): Ամէ՛ն ինչ կը  
համարձակինք բնել: Այտան պահել կ'ուզենք:  
Ճոխ գանձ մ'ըն է այդ կոյր աղջիկը, մեզի հա-  
մար: Արդ Մատա՛մ, գացէ՛ք:

ՍԱԼ.— Հա՛, հա՛, հա՛, լա՛ւ ծուղակը ինկաւ:  
Յիրաւի՛: (Ձախակողմ կ'երթայ):

ՓՐԻՆՍ.— Տեղակա՛ւ, ըէվօլվէրա կը բաւէ քե-  
զի: Այսպէս ես կը մնամ ամէնավերջինը: (Բոլորը  
դուռս կ'երթան, դուռը կը կղպուի շուտով):

Սիկարները վերադառնին վրան են:

ՏԵՂ.— Անամօ՛թ, անշնորհք, կեցիր Քիբրի-  
անի: (Կ'ընկնի, դողդողալով արթնի վրայ):



ՏՍՍԱՐԱՆ.— Պարսեղնայ, Էստրասա Մե-  
սիայի մեջ տուն մը. խոշոր սենեակ մը, գեղեցիկ  
կերպով զարդարուած, Սպանիական տարազով:

ԳԻԾԵՐ.— Լուսնի շոյք սենեակը կը լու-  
սաւորէ ետեւէն: (Տարի մը անցած է):

ՎԱՆՏՈՄ եւ ՓՐԻՆՍ կը մտնեն աջէն:

ՎԱՆՏ.— Սատանան կը խլէ՛ մեր բաղդը:  
Ի՛նչ սքանչելիօրէն կ'երգէր:

ՓՐԻՆՍ.— (Սեղանին քով կը նստի): Յիրաւի՛,  
հրաշալիօրէն, հրեշտակի կը նմանէր, ու գործէն  
ալ շատ գոհ կը թուէր:

ՎԱՆՏ.— Այո՛: Առաջուց տեսած էի, արուես-  
տի առատաձեռնութիւնը չէինք զլացած: Այս  
կ'սփոփէր զինքը: Եւրոպայի ամբողջ վարիչները  
մէկ վայրկեանի մէջ ոտքերուն պիտի գային. ար-  
դէն իւրաքանչիւր զիւր 100 ոսկի կը շահեցնէր  
մեզի. ա՛հ, այդ անիծեալ հրդեհը:

ՓՐԻՆՍ.— Ինչպիսի՛ ճիշ մ'արձակեց:

ՎԱՆՏ.— Այո՛, նախ չի հասկցաւ, յետոյ կա-  
տաղի խեղացնող մը դարձաւ անմիջապէս. այն  
ատենէ ի վեր խելագար է:



ՓՐԻՆՍ.— Դարման մը չի կա՞յ:

ՎԱՆՏ.— Լո՛ւէ՛, յիշելու արժանի բժիշկներ չի կան հոս. կարգ մը սրճարան զեզերողներու հնամենի արիւն տունելէն և զրամաշորթութենէն զատ ոչի՛նչ կայ: Ո՛հ, ո՞ւր է մեծ բժիշկի մը կարծիքը:

ՓՐԻՆՍ.— Մօտակայ տեղեր հատ մը չի կա՞յ արդեօք:

ՎԱՆՏ.— Մէկու մը վրայ իսկ լսած չեմ: Սպանիայէ դուրս տեղէ մ'ալ չենք կրնար բերել տալ, խե՛րը անիծելիք. աշխարհ կ'արժէ կարծիք մը ձեռք անցնել:

ՓՐԻՆՍ.— Չե՞նք կրնար գրել:

ՎԱՆՏ.— Լո՛ւէ՛ պէ՛, սրտ ախտի գրենք, և ի՛նչ կ'արժէ, մանաւանդ, զբաւոր կարծիք մը: Եւ թէ ասկէ շատ առաջ ալ տառնի բան մը ունեցած կրնայ ըլլալ. ասոնց բոլորը նկատի առնուելու են: (Կ'եղի եւ ձախակողմ կ'երթայ):

ՍԱԼ.— (Կը մտնէ ձախակողմ): Ինչպէ՞ս է:

ՍԱԼ.— Սոսկալի կերպով խելագար, բան մը չի կրցի ընել, չեմ գիտեր ինչ ընելու է:

ՎԱՆՏ.— Այտան մեզի համար գանձ մըն է, աղ զգտիկ ձայնատուփին մէջ, կը տեսնէք Տիֆայի մը գանձը կայ, ո՛չ նեղութիւն խնայելու ետք, ո՛չ ալ զրամ:

ՍԱԼ.— Երբ նամակատուն կը դառնուէի, ճիշտ հիմա, հոն կ'իմ մը ըսու թէ Անգղիացի բժիշկ մը ելած է, մեծ պանդոկին համար:

ՎԱՆՏ.— Ի՞նչ է անունը:

ՍԱԼ.— Տարօրինակ անուն մըն էր:

ՎԱՆՏ.— Այո՛, ի՞նչ էր:

ՍԱԼ.— Ֆէտհըրթօն:

ՓՐԻՆՍ.— (Կ'եղի): Լոնտոնէ եկած է:

ՍԱԼ.— Չի՛ կրցի ստուգել:

ՎԱՆՏ.— Երթամ տեսնեմ, գտնել պիտի աշխատիմ, ո՛չ մէկ բան խնայելու եմք:

ՓՐԻՆՍ.— Ուշադրութիւն ըրէ:

ՎԱՆՏ.— Ի՛նչ, կը վախնամ<sup>o</sup> բո՛ւհ. հետքերնիս կորսնցողին: Անոնք հիմա իրենց աւ Անգլիան կը գտնուին:

ՍԱԼ.— Յուսամ թէ:

ՎԱՆՏ.— Լուցէ՛ք: Ձեզի կ'ըսեա թէ, Անթոնիօ, տղա՛ս քեզ և մատամը կը փնտռեն վիէննայէն:

ՓՐԻՆՍ.— Հա՛, հա:

ՎԱՆՏ.— Այո՛, սա թերթին մէջ տեսայ, և կարծեմ գաղտնի ոստիկան մը կը հետապնդէ Ձեզ:

ՓՐԻՆՍ.— Ուրեմն քիչ մըն ալ կենալու ենք հոս:

ՎԱՆՏ.— Բաւական երկար տոտն կենալու ենք, Անթոնիօս: Ես պանդոկ կ'երթամ, Աստուած տար որ անգամ մը ազեկնալը տեսնայի գանձիկէս: (Կը մեկնի ձախակողմ):

ՓՐԻՆՍ.— (Պատահաւ կ'երթայ): Ո՛հ ինձ, հիմա թատրոնի ժամանակն է, հիմա մեզի համար երգելու վրայ պիտի ըլլար, և գրամ պիտի վաճառեցնէր մեզի, գա՛նձ, գա՛նձ:

ՍԱԼ.— Թատրոնի Տնօրէնին հետ ըրած մեր համաձայնութիւնը բան մը չի՞ վճարեր մեզի:

ՓՐԻՆՍ.— (Կը մտնեալ): Ոչի՛նչ, հիւանդութեան համար, ինչպէ՞ս կրնայինք նախատեսել այսպիսի բան մը: Ինչպէ՞ս կրնայինք գիտնալ թէ այդ հրդեհի վախը այսպէս իր խելքը պիտի թրոցներ: Ինչպէ՞ս կրնայինք գիտնալ թէ իր խելքը այսքան ճնշին շարժառիթէ մը պիտի ազդուէր. բո՛ւհ, մեր պայմանները որոշեցինք, բարձր պայմաններ, և անոր բացակայած ամէն գիշերուան համար ստիպուած ենք վճարել, ասկէ զատ, կըր-



նայինք ալ զինք ամուսնացնել լաւ մէկու մը հետ:

ՍԱԼ.— Լաւ մէկո՞ւ մը հետ:

ՓՐԻՆՍ.— (Սեղանին քով կը նստի): Այո՛, ծեր Մարքիզ Գարամպա մը կայ հոս, սին գլուխ, ապուշ ծերուկ մը, սակայն դրամով լիցուն: Այտայի վրայօք կը հարցնէր: Ամուսնացնել հետը և յետոյ խաղաղիկ կերպով՝ հեռանալ, ամուսնային ամպի նման, դուն և ես. և Ասպետը ձգել Մարքիզին քով իբր փեսաւէր, մինչև որ ա՛ն ալ վըճարուի. Ասպետին լաւ փոխարինութիւն մը պիտի ըլլայ այս:

ՍԱԼ.— Մեզ վիէննայի մէջ ազատեց, չի մոռնանք այդ բանը:

ՓՐԻՆՍ.— Ծի՛շդ է, ճի՛շդ է, սակայն հոս ապահով ենք, երախտագիտութիւնը ձմեռնային հագուստի կը նմանի, չենք կրնար միշտ հագնիլ:

ՍԱԼ.— Ուրեմն ուշադրութեամբ մէկդի ձգէ և ցեցերը թող չի դպչին, սակայն մի՛ մոռնար, օր մը զիս ալ մինակ պիտի ձգես:

ՓՐԻՆՍ.— Չէ՛, դուք իմ ուրիշ մէկ անհրաժեշտ անձա եք:

ՍԱԼ.— Ես այդպէս չեմ խորհիր, լա՛ւ կը ճանչնամ բնաւորութիւնդ: Ա՛հ խոստումի սամբողջ տարիները, և գեռ չ'ամուսնացած հետս, սրտիս ամբողջ այս ցաւալի կարծրացումը, մինչև որ փափաքածէդ աւելի չար ու անարգ դարձաւ, կուտ մը ազնուութիւն չի ձգեցիր մէջս, յուսահատութեան սատանան մի՛ արթնցնէր մէջս:

(Դեպի ձախ կ'երթայ):

ՓՐԻՆՍ.— (Կ'ելլի): Ի՞նչ ըսել կ'ուզես:

ՍԱԼ.— Դուն այս կոյր աղջիկը կը սիրես, Մարքիզ Գարամպան չէ՛ որ ստուգիւ կ'սպառնայ անոր մտքին անդորրութեան և իր մարմնոյն սրբազնութեան: Սակայն դո՛ւն, Անթօնիօ Քիթ-

րիանի, սրիկայ, կառավարութեան հին լրտես, կե՛ղծ բարեկամ, կե՛ղծ թշնամի, նոյնիսկ սատանայի ցեղին անպատուարե՛ր, անոնք զոնէ հաւատարիմ կը գտնուին իրենց անպատուութեանը:

ՓՐԻՆՍ.— Լա՛է՛, կի՛ն:

ՍԱԼ.— Ո՛չ, պիտի չի լռեմ: Կը կարծե՞ս թէ լուռ ու մոռնջ պիտի կենամ և քու տառափալից աչքերուդ անոր կոյր գէմքէն յագեհալը դիտելով անխօս պիտի մնամ: Քու սատանայաւ կան նպատակիդ ծագիլը, անոր զօրանալը, ոյժ ստանալը հանդարտօրէն դիտելու և ո՞չինչ ընելու եմ: Ո՛չ, կ'ազդարարեմ քեզ, եթէ այս բանը ընես, կը հասկնաս ինչ որ ըսել կ'ուզեմ, կը մեռցնեմ քեզ, ուշադրութիւն, բարկացած եմ, Աստուած գիտէ թէ ինչու, Աստուած գիտէ թէ ի՛նչ բանի համար, այս կոյր աղջիկը սիրե՞լ, կարելի է զիս աւելի գրգռողը ա՛ն է, ո՞վ գիտէ: Սակայն զգուշացի՛ր, անոր անմեղութեան գինը քու կեանքը է, և քանի որ կենդանի Դատաւոր մը կայ, պատիժն ու տուգանքը կը գործադրեմ ըստ արժանւոյն:

ՓՐԻՆՍ.— Ա՛լ կը բաւէ, շնորհք ըրէ, կ'արժէ որ մէկը վարձեր քեզ թատրոնէն, կրնային մէկ կամիթով դուրս հանել Մէտեան և գլխաւոր դերը քեզի առլ, տե՛ս, տե՛ս:

(Կը մտնէ Այսա ձախէն. թոյրովին խեղազուր):

ԱՅՏԱ.— Ձու թակները շտկուած չեն, կը ճըռնչեն, ինչո՞ւ Մաէսգրօն չի զարներ իր գաւազանը: Ինչպէ՞ս կրնամ գողտրիկ երգս կրգել այս աններդաշնակութեան մէջ: Չէ՛, պիտի չ'երգեմ, ի՞նչ: Կարեւորութիւն չեմ տար անոնց ծափահարութեան, մի՛շտ սխալ է, և միտքս կը դարձնէ: Ի՞նչ է փոսին մէջի այդ ձայնը: Հրգե՛հ, անա՛նկ կ'ըսէք: Հա՛, ճամբան ցուցուցէ՛ք: Կո՛յր եմ: Ո՛հ,



Սինեօ'ր, ճամբան ցուցո'ւր, Վի'ր, ձեռքէս բռնէ,  
անձնասէ'ր, զիս կը մոռնայ: Պրէ'նտ, հաւատա-  
րիմ Պրէնտս, հո՞ս ես:

ՓՐԻՆՍ.— Ձի կրցա՛ւ մոռնալ Անգղիան:

ՍԱԼ.— Խեղճ աղջիկ, ո՛չ չի կրցաւ:

ԱՅՏԱ.— Արդեօք ի՜նչ բանի կը նմանի երես-  
նին, մտերմութիւն կը կեղծեն ինծի, այս զրգըւ-  
եալ Սպանիացիները: Չգեցէ՛ք ծեր Մարքիզը,  
կ'ատեմ զայն, իսկ քու խօսքերդ, Քիբրիանի',  
գարշելի են: (Դեպի աջ կ'երթայ):

ՍԱԼ.— Հա՛:

ՓՐԻՆՍ.— Ոչնչաբանութիւն: (Առաջ կ'երթայ):

ԱՅՏԱ.— Ես տղատալ ըլլալու եմ, ես արուես-  
տագիտուհի մըն եմ՝ ձայնովս, իմ փոքրիկ աղջ-  
կան ձայնովս, կրնամ փոթորիկով խարազանել  
մարդկային ջուրերը և կրկին մեղմել, անգոր-  
բացնել իմ Բեռնիէ'յովս. ինչո՞ւ աւանդութիւն-  
ներով չըջափակուիմ:

ՓՐԻՆՍ.— Երբէ՛ք պիտի չ'ազատի, պիտի պա-  
տախտանեմ:

ԱՅՏԱ.— Տնօրէնը կ'ընէ. — «Շատ արագ է  
այս հատուածը, Սինեօրի'թոս». ես ալ կը պա-  
տախտանեմ. — «Արա՛գ նուագեցէք և ինծի հե-  
տեկցէ՛ք, աֆի'կ»: Իր կատուի մասնէրովը և  
բանաձեւերու խելքովը կը փորձէ սոխակին գեղ-  
գեղը սանձել: Պիտի երգե՛մ, եթէ անտարբեր  
գանեմ զիրենք, պիտի մըմնջեմ մինչև որ հալին.  
յետոյ կրկին պիտի կենդանացնեմ զանոնք և  
հանդարտ պիտի ձգեմ որ հանդէին ձոխ երգի  
ծոցիս մէջ. և դո՛ւն, աֆի'կ, դուն պէտք է որ  
ինծի հետեւիս. ես Մաէսդրօյի համբաւը ունիմ  
չըթնեքուս վրայ: Տիվան՝ պիտի չարատաւորէ ի-  
րեն կոտակուած ժառանգութիւնը: Ա՛հ, յոգնեցայ,  
ինչո՞ւ չի կարենամ նուագել հին երգեհոնիս վը-

րան: Դեղձանիկս կ'երգէ: Ա՛հ, հողւոյս հատո՛րը:  
ո՛չ ոք կրնայ սանձել քու երգդ, կամ խմիս,  
երբէ՛ք, մաի'կ ըրէ: (Կը կենայ ակնկալու եւ մը-  
շիկ ընկղու ձեռով, քննիմ մեջտեղը, կը մտնէ  
Ասպէս ձախէն):

ՓՐԻՆՍ.— Լռէ՛:

ՍԱԼ.— Ձի լսած մէկ ձայնը մտիկ կ'ընէ: (Դե-  
պի Ասպէս կ'երթայ): Ի՜նչ կեցուածք, սիրուն չէ՞:

ՎԱՆՏ.— (Փսիսալով) Բժիշկը լուր ղրկեր է  
թէ պիտի գայ: Ձի կրցի տեսնել զինք, իր ճամ-  
բորդութենէն յետոյ կը հանգչէր. լուր ղրկեց թէ  
չուտով կուգայ. երանի թէ կարենար տեսնել Այ-  
տան հիմա: Դեղեցիկ չէ՛:

ՍԱԼ.— Այո՛, այո՛, ձգենք զինք. եկո՛ւր, մի-  
նալը աւելի հանգիստ է: (Այտան մէկ կողմէն  
մեկալը կը շարժի կամացուկ ու կ'երգէ ցածեմ,  
ինքնիրեն):

ՓՐԻՆՍ.— Սակայն ապահո՞վ է:

ՎԱՆՏ.— Պատշգամին դուռը գոցեմ, այն ա-  
տեն ապահով է. կամացո՛ւկ. եկո՛ւր: (Այտա շար-  
ժարոտիկ կ'երթայ, դուռ կ'երթան, դադարե մը  
վերջ, Աւստրիական Տեղ. Ուս.ը կը տեսնուի որ  
կ'եղի պաշտպանէ պարսեզ երկարող սանդուղի  
վրայէն, բաւական ծպտեալ ձեռով, խիստ ուշադ-  
րութեամբ սենեակ կը մտնէ):

Տեղ.— Այո՛, տունն է: Հոս եկած եմ ու և-  
րանի թէ անգամ մը տեսնէի Այտան: Լուսանկար  
չունի որ դնեմ: Լսեցի թէ շատ հիւանդ է, հըր-  
դեհէ վախցած է կ'ըսեն:

ԱՅՏԱ.— Կը սխալի՛ք: (Կեղի ու դուռ կու-  
գայ) Այդ հատուածը այդպէս ատամբօյով պիտի  
չ'երգեմ: Մաէսթրօն տարբեր բան ըսել կ'ուզեր:  
Ձէք կրնար հետս ամուսնանալ, Մարքի'զ, ես  
սոխակ մըն եմ:



ՏԵՂ.— Ան ըլլալու է, մայն կօծ, ինչ գեղեցիկ է:

ԱՅՏԱ.— (Պատահանին կ'երթայ) Լուսնի լոյսը Արարչին ժպտն է. թռչնոց ձայնը առտուան ոգիններն են, գեփիւռի մրմնջիւնը քաղցր, Շէլփօմէն կուգայ, ուղղակի անգղիական կաւճաբլուրներէն, խոր Պիսքայեան ջրաշխարհի վրայէն, այս թմրած արևու և շարժուն ստուերներու երկրին խկ Շէլփօմի պուրակներուն սոխակը քոյրս է:

ՏԵՂ.— Երանի թէ Պրէնտ լսէր հոս գտնուիլը, ետ երթալու եմ: (Կ'անցնի միւս կողմ) Դարձեալ գտանք զինքը: Տեր Թօյֆէլ, անա՛ վանտօմ, լո՛ւէ: (Վանտօմ կը մտնէ պատշգամբէն):

ՎԱՆՏ.— Ո՞վ էք դուք, պարոն:

ՏԵՂ.— Անգղիացի բժիշկին ծառան եմ, այնքան շատ փափաքեցաւ գիտնալ թէ ո՛ւր է Սինեօրի և Սինեօրիթայի տունը. երթամ հոս բերեմ. կը տեսնեմ թէ հիւանդ է: (Այսա կը նստի մտածկոտ, պատահանին քով, ձախակողմը):

ՎԱՆՏ.— Շա՛տ հիւանդ է, խեղճին խեղճը հիւանդ է:

ՏԵՂ.— Ահ, Տօքթորս երևելի բժիշկ մըն է մտային հիւանդութիւններու:

ՎԱՆՏ.— Երիտասարդ է:

ՏԵՂ.— Չափաւաս է, այո՛, սակայն փորձառութեան մէջ քեզմէ կամ ինձմէ աւելի տարեց է. բարեկամ, հոս թող մնայ, հանգիստ ձգեցէք, առանձին տեսնելու է, վստահ եղէք այդ մասին:

ՎԱՆՏ.— Թող առանձին քննէ: Ինչ է անունը:

ՏԵՂ.— Ֆէտէրսթօն, Լոնտօնէ, երևելի անձ մէ:

ՎԱՆՏ.— Շուտ կուգայ:

ՏԵՂ.— Հիմա զինք կանչելու պիտի չերթամ,

սպասեցէ՛ք մինչև որ վերադառնամ: Թանկագին է Ձեզի համար, հէ՞:

ՎԱՆՏ.— Ինձի համար ամէն ինչ է, բարեկամիս զաւակն է, երևելի երգչուհի մըն է, նշանաւոր արուեստագիտուհի մը և այս տեղի թատրոնին հետ պայմանագրութեան տակ:

ՏԵՂ.— Երկա՞ր ժամանակի համար:

ՎԱՆՏ.— Մէկ տարուան համար:

ՏԵՂ.— (Մեկուսի) Այս բանը գործը կը կընձռոտէ: (Բարձր) Լա՛ւ, շատ չ'անցած կ'աղէկնայ, խօսք կուտամ, երբէ՛ք մի վախնաք, բարեկամ. Տօքթորը երբէ՛ք չի ձախողիր: (Կ'անցնի ձախակողմէն) Պատշգամէն պիտի գտնուի: (Կը մեկնի Տեղ. Ուս.ը):

ՎԱՆՏ.— Ուրեմն յոյս կայ մեզի:

ԱՅՏԱ.— (Ելելով) Արդ երթալու եմ ու գեղձանիկիս խօսելու եմ: (Աջակողմը նստելով) Ձիս պիտի փնտռէ, այդ կարճահասակ մարդը. իր և իմ երգս, այո՛, մենք կրնանք ընկերանալ, ինք իր մեղեդիի թելթէ թրթռիւնովը, իսկ ես իմ վըշտալից երգովս, կուգամ, սիրելիս, կուգամ: (Տան մեջ կը մտնէ աջակողմէն, պատշգամբէն չ'երթար սակայն, Վանտ. կը հետեւի կառնացուի: Կը մտնէ Փրինս պատշգամբէն, Մարֆիզ Բարտոնայի հետ՝ որ խիստ ճոխ ու զարդարուն հագած է, ինչպէս որ Սպանիացի մը կրնար հագնիլ):

ՄԱՐՔ.— Հոս մէկը չկայ, Փրինս:

ՓՐԻՆՍ.— Ինչ որ կ'ուզէք խօսեցէ՛ք:

ՄԱՐՔ.— Փոքրիկ Այտան, կրնա՞յ Ձեր խնամակալութեանն ուրիշի մը փոխանցուիլ, Փրինս:

ՓՐԻՆՍ.— Իւր արժէքնովը, այո՛, չորս հարիւր հազար բեզեդայի:

ՄԱՐՔ.— Իսկ թատրոնի իր գործէն հանե-



ՓՐԻՆՍ.— Հարիւր հազար ևս :

ՄԱՐԲ.— Ե՛րբ կրնայ բաւ համարուիլ, Ձեր խնամակալութենէն բաժնուելու համար, Փրի՛նս :

ՓՐԻՆՍ.— Երբ որ դրամը ստանամ :

ՄԱՐԲ.— Բայց կը լսեմ թէ հիւանդ է :

ՓՐԻՆՍ.— Երգելու համար շատ հիւանդ է, բայց օդափոխութեան համար ո՛չ այնքան :

ՄԱՐԲ.— Սակայն չե՛մ ուզեր որ իր ազգականները Պարսելոնայ մնան :

ՓՐԻՆՍ.— Մենք պիտի երթանք, փափաք չ'ունինք Ձեզ ձանձրացնել :

ՄԱՐԲ.— Իսկ միւսները, Մատամն ու ձեր բարեկամը, փոքրիկ Աւստրիացի՛ն :

ՓՐԻՆՍ.— Ինձի՛ հետ է որ պիտի բանակցիք, անոնք պիտի մեկնին հետս : (Մեկուսի) Ուշադրութիւն պիտի ընեմ որ չ'մեկնին :

ՄԱՐԲ.— Կրնամ վստահիլ ասոր :

ՓՐԻՆՍ.— Անտարակո՛յս :

ՄԱՐԲ.— Լա՛ւ, այս գիշեր, ժամէ մը դրամը պատրաստ կըլայ :

ՓՐԻՆՍ.— Այո՛, բայց թատրոնի Տնօրէնին պարտաւորեալք :

ՄԱՐԲ.— Այդ մուրհակը ջնջող հաստատագիրը վճարման մէկ մասը պիտի կազմէ :

ՓՐԻՆՍ.— Շա՛տ լաւ : Դրամին համար մարդ մը զրկեմ Ձեր տունը, անձամբ չեմ կրնար գալ, քանի որ ընկերներս չեն ուզեր որ օրիորդը ձգէ թատերաբեմը, դուք ալ մէկը կը զրկէք Այտային համար. պատշգամէն կը յանձնենք Ձեզի : Պատգամաւորս, իբր վկայութիւն, մատանի մը պիտի տայ Ձեզի ու «Այտա» պիտի ըսէ : Ձեր պատգամաւորն ալ շատ չ'անցած կը վերադարձնէ մատանին ու «Բարամպա» կ'ըսէ, կը հաւանի՛ք ասոր :

ՄԱՐԲ.— Այո՛ :

ՓՐԻՆՍ.— Մարքի՛զ, արդ ժամանակ մի՛ անցնէք : Վախնամ կրկին չենք հանդիպիր իրարու, քանի որ վաղն առտու կանուխ մեկնած պիտի ըլլանք Պարսելոնայէ :

ՄԱՐԲ.— Ասկից ո՛ւր պիտի մեկնիք :

ՓՐԻՆՍ.— Անգղիա :

ՄԱՐԲ.— Պա՛ղ երկիր մը :

ՓՐԻՆՍ.— Սակայն հարուստ երկիր մը : Պուէնոս Տիաս :

ՄԱՐԲ.— Պուէնոս Նօլէս :

ՓՐԻՆՍ.— Ո՛չ, տան դռնէն գնա : (Կ'անցնի)

Պատշգամը այնքան ապահով չէ Սպանիոյ մէջ :

ՄԱՐԲ.— Սի ուսթէտ քիւիսէրի : (Դուստ կ'երթան աջակողմի տան դռնէն : Կը մտնէ ՍԱԼ. պատշգամէն, բարկութեամբ կ'ապուստանայ) :

ՍԱԼ.— Ահա ա՛յս է իր խաղը, ամուսնացնել զայն, այդ քասթիլեան ըուէի հետ. չէ՛, չըլլար, կրնանք չքաւոր ըլլալ կրնանք սովամահ ըլլալ, կրնանք, եթէ հարկ ըլլայ. սակայն ո՛չ մէկ վնաս պիտի հասնի իրեն, իր կոյր անճարակութեանը մէջ, եթէ կրնամ արգիլել : (Կը մտնեն ՎԻՐ եւ Տեղ. ՈՍՏ. պատշգամէն երկուքն ալ ծպտեալ ու մօրուսաւոր) :

ՍԱԼ.— Ո՛վ էք դուք, պարոններ :

Տեղ.— Անգղիացի բժիշկն է այս, Տօքթ. Ֆէտէրթօն : Կարճահասակ Աւստրիացի պարոնը այս ճամբէն գալ պատուիրեց մեզ :

(Կը մտնէ ՎԱՆՏ. աջակողմէն) :

ՎԱՆՏ.— Ահա՛ եկայ, Փրինսէ՛ս : Ազէկ ըրի անոնց սպասելով : Շատ ազնիւ էք, Տօքթօր :

ՎԻՐ.— Չ'արժեր, ո՛ւր է հիւանդը :

ՎԱՆՏ.— Կը հաճի՛ք հոս բերել, Փրինսէ՛ս :

ՍԱԼ.— Այո՛, բերեմ : (Կ'երթայ)

ՎԻՐ.— Անապարեւու պէտք չ'ունինք, չ'ըլլայ



որ զինք նեղէք կամ յուզէք:

ՍԱԼ. — Մի՛ վախճաք: (Կ'երթայ աջակողմէն):  
Խիստ մեղմ պիտի վարուիմ հետը:

(Կը մեկնի ՍԱԼ. աջէն)

ՎԻՐ. — Պարո՞ն, ախտանիշերը ըսէք ինձ:

ՎԱՆՏ. — Երբ «Կոյր Երգչուհի» թատերգու-  
թեան մեծ եղանակը կ'երգէր, հրդեհի ազդարա-  
րութենէն ահաբեկած էր. իր ամէնաբարձր խաղին  
մէջ կեցաւ, մեռելի նման անխօս, կատարեալ լը-  
ռութիւն պիտի կոչէիք, ու գետին ինկաւ:

ՎԻՐ. — Նուաղա՞ծ:

ՎԱՆՏ. — Այո՛, ա՛յդ է բուն բառը: Վազեցի:  
Սթափեցաւ, սակայն խելագարած էր, խելացնոր:  
Անգղիական տեսարաններու եւ Անգղիացիներու  
վրայօք պիտի խօսի Ձեզի: Անգղիա ծնած էր սա-  
կայն իր ամբողջ պարագաները մեռած են ու ինչ  
ընելը չի գիտեր:

ՎԻՐ. — Շատ բնական է, լա՛ւ:

ՎԱՆՏ. — Հասկնալ կ'ուզենք թէ ի՞նչ ընելու  
ենք իրեն: Ինչպէ՞ս դարմանել իր հիւանդութիւ-  
նը: Ցարդ իր փափաքներուն արգելք չ'եղանք.  
լաւ ըրած չ'ենք:

ՎԻՐ. — Շա՛տ լաւ, վախէ յառաջ եկած խելա-  
գարութիւն, արագ սակայն սաստիկ պարագաներ  
են ասոնք: Մինակս քննելու եմ զինք, բոլորովին  
առանձին: Պայմա՛ն է այս, տարբեր կերպով չեմ  
կրնար խորհուրդ մը տալ:

ՎԱՆՏ. — Հասկցայ: Առանձին թող տեսնէ Ձեզ:

ՎԻՐ. — Ի՞նչ է անունը:

ՎԱՆՏ. — Այտա՛:

ՎԻՐ. — Այտա՛:

(Այստեղ կը տեսնուի աջէն)

ԱՅՏԱ. — (Կուգայ) Այո՛, Վի՛ր, (դադար) հո՛ս  
եմ, սիրելիս: Ո՛րչափ առենէ ի վեր հոս ես: Ի՞նչպէս

են Սինեօրը և Պրէնտը: Կեր տրուեցա՛ւ դեղձա-  
նիկիս:

ՎԻՐ. — Ա՛ս է օրիորդը:

ՎԱՆՏ. — Այո՛, կարծեմ Ձեզ կը շփոթէ հին  
բարեկամի մը հետ:

ՎԻՐ. — Ծիշդ այդպէ՛ս է: Արդ, հետը ձգեցէք  
զիս: Ծօ՛րճ, (Տեղ. Ուս. ի) պատշգամէն դուրս կե-  
ցիր, և դո՛ւք, պարոն, միւս սենեակը գացէք:

(Տեղ, կ'աներեւութաւորապէս պատշգամէն)

ԱՅՏԱ. — Ձայնը փոխուած է սակայն ի՛ր  
ձայնն է: Ուր ես, Վի՛ր:

ՎԻՐ. — Արդ, պարո՞ն, դուրս ելէք եթէ կը  
հաճիք:

ՎԱՆՏ. — Անշուշտ, Տոքթոր, կատարեցէ՛ք  
ինչ որ կրնաք ընել մեզի համար:

(Կը մեկնի ՎԱՆՏ աջէն)

ՎԻՐ. — Կղպանքներ չի կան այս դռներուն վը-  
րայ, հոգ չէ՛, եկո՛ւր, հոս նստիր, անուշիկ Այտաս:

(Աթոռին կը նստեցնէ, ձախը)

ԱՅՏԱ. — Ո՛հ, այո՛, այդպէս խօսէ ինձի: Սիրե-  
լիս, ինչո՞ւ թողուցիք զիս, Վի՛ր: Դեղձանիկս մեռա՛ւ:

ՎԻՐ. — Ձէ՛, Այտա՛:

ԱՅՏԱ. — Վի՛ր, երգե՞մ քեզի: Արուեստագի-  
տուհի մըն եմ այժմ. ամէնուն շրթունքը կը դող-  
դղայ ձայնէս, կարողութիւնս կը ճանչնամ: Ձիս  
կը սիրեն, այս տոփալից Սպանիացիները, բայց  
ես չեմ սիրեր զանոնք: Ես՝ լոկ Սինեօրը, Պրէնտը  
և Վի՛րը կը սիրեմ:

ՎԻՐ. — Կուզե՞ս Սինեօրը տեսնել, Այտա՛:

ԱՅՏԱ. — Ո՛հ, այո՛: Սինեօրս, իր «Դաշնակէն  
ասդին եկուր, Այտա՛, եկո՛ւր փոքրիկս» խօսքե-  
րովը: Հին Շէլքոմի դաշնակը... ա՛հ, հիմա զա-  
նոնք համր դարձնող բանը ունիմ ձայնիս մէջ.  
այս բանը իրիկուն մը եկաւ ինձի. հրեշտակ մը



իր լուսեղէն մատովը դպչեցաւ քունիս մէջ և գիտցայ թէ արուեստագէտի երգելու հրաշքը եկաւ վրաս. հետեեալ իրիկուն թատրոնին մէջ երգեցի յանկարծ, երկնի բոսորագոյն դրան քովի արտայտին նման երգեցի, այդ միջոցին «կրակ» պոռացին, սատանան նախանձեր էր, կը տեսնես կրկին գետնաքարչ եղանք, սակայն հրեշտակային հպումը երբէ՛ք չհեռացաւ այն ատենէն ի վեր:

Տեղ.— Ընդմիջեցէ՛ք, ահա՛ Պրէնտ և զիս ալ ետսաւ, Պրէնտ վեր կուգայ, Պրն. վիր:

Վիր.— Լո՛ւր պահեցէ՛ք, Աստուծոյ սիրոյն:

(Կը սննե Պրեկն ձախեկ, պաշտօնի դռնէն):

Տեղ.— Լո՛ւր գտանք, թէպէտ խելագարած:

Պրէնտ.— Խելագարած: Ո՛հ, անանկ բաներ մի՛ ըսէք Օրիորդ Այտայի մասին:

ԱՅՏԱ.— (Սասիկ ճիչով մը կը վազէ պաշտօնին դռնը) Ո՛հ, ծե՛ր Պրէնտ, Պրէ՛նտ, Հէր-քիւլէ՛սս, ամուր բռնէ զիս, Պրէ՛նտ, ո՛հ, որքան երջանիկ եմ:

Տեղ.— Հրէ՛ թող երթայ: Ամէն ինչ աւերցիր:

Պրէնտ.— (Հեկեկաչեկ) Ո՛հ սիրելիս, Այտա, իմ խեղճ փոքրիկ կոյր տիրուհիս: Գտնուեցար կրկին, հիմայ, Աստուած վկայ, պիտի պահպանենք քեզ, և (Կը սննե Փրինս ու Վանս. աջէն):

ՎԱՆՏ.— Ի՛նչ է այդ:

Պրէնտ.— Օհօ՛, սրիկան, օհօ՛: Կախաղանի Փրինսը, ահա կրկին եկայ, նախկին թիկնապահն եմ և ահաւասիկ մեր մարգարիտը, մեր գեղեցիկը, մեր թանկագինը:

Տեղ.— Պիտի խանգարես ամէն ինչ, աւանակ:

Պրէնտ.— Իրաւունք չունիմ, Սվուրի: Ձէ՛ք ձգեք որ տանէի հիմա:

Տեղ.— Ապո՛ւշ:

Վիր.— Պարո՛ն, հաճեցէ՛ք սա կատղած մարդը

դուրս հանել: Չեմ կրնար կարծիքս յայտնել այնչափ ատեն որ հոս գտնուի:

ՓՐԻՆՍ.— Դո՛ւրս, զրպարտիչ: Սանդուղէն վար իջիր թէ ոչ գնդակահար կ'ընեմ քեզ:

Պրէնտ.— (Մեկուսի) Դիտնայի կը յարձակէի:

Տեղ.— Կորսուէ՛ աւանակ:

Պրէնտ.— Շատ լաւ, շատ աղէկ, պիտի երթամ պահ մը:

ՎԱՆՏ.— Այո՛, աւելի լաւ կ'ըլլայ եթէ շուտ երթաս, ո՛վ որ ես, գնա՛ հիմա:

Պրէնտ.— Շատ լաւ, Աւարիացի խաբեբայ, պիտի երթամ, սակայն շատ չ'անցած պիտի վերադառնամ, մի՛ վախնար: Դիտեմ ուր որ գալ պետք է:

ԱՅՏԱ.— Մի՛ կորսուիր սիրելի ծեր Պրէնտ:

Պրէնտ.— Ահա՛, տեսէ՛ք: Ինչպէ՛ս երթամ կրակին

Վիր.— Պարո՛ն, գացէ՛ք ով որ էք: Այս դեռատի օրիորդը իմ հիւանդս է և Ձեր հեռանալը կը պահանջեմ:

Պրէնտ.— Շատ լաւ, կը տեսնեմ որ աւելի մեծ խաղ մը կայ գործին մէջ, Յայտնի մի՛ ընէք Ձեր ծրագիրները, ես պատրաստ եմ թշնամիին անմիջապէս յարձակելու: Շա՛տ լաւ Տօքթօր, կ'երթամ: (Կը մեկնի Պրեկն, ձախեկ)

Վիր.— Ո՛վ էր այս մարդը:

ՓՐԻՆՍ.— Անգղիացի ամբարտաւան մըն է որ օրիորդը ասկէ առաջ անգամ մըն ալ վախցուց մեռնելու աստիճան:

Վիր.— Բանի մը չեմ կրնար պատասխանել եթէ կրկին գայ:

ՎԱՆՏ.— Կը վստահացնեմ Ձեզ, կրկին չի գար:

ՓՐԻՆՍ.— Ինչպէ՛ս պիտի գիտնանք:

ՎԱՆՏ.— Օ՛, կը գնդակահարեմ այս գիշեր:

ՓՐԻՆՍ.— Կարելի է լաւագոյնը այդ է:

Տեղ.— (Մեկուսի) Իրա՛ւ կ'ըսես:



ՎԻՐ. — Կ'ուզէի առանձին խօսիլ Փրինսէսի:

ՎԱՆՏ. — Շա'տ լաւ:

ՎԻՐ. — Եթէ հրամաններուս հնազանդիք երեք օրէն բուժելի պարագայ մըն է:

ՎԱՆՏ. — Երեք օրէն. կը հնազանդինք:

ՎԻՐ. — Փրինսէսը հո'ս զրկեցէք: Ծօ'րճ, ուր որ ես հոն կեցիր: Արդ՝ ժամավաճառ մի՛ ըլլաք, Փրինսէսը հոս զրկեցէք:

ՓՐԻՆՍ. — Իսկո՛յն. Ասպետ, եկուր. Այտան պիտի մնայ:

ՎԻՐ. — Այո՛, այո՛, չո՛ւտ եղէք եթէ կը հաճիք:

ՎԱՆՏ. — Անմիջապէս: (Կ'երթան աջեւ)

ՎԻՐ. — Գնաց Պրէնտ:

ՏԵՂ. — Վարը կ'սպասէ:

ՎԻՐ. — Հոն, վարը թող սպասէ, չէ՛, կամացուկ մը խօսէ երթայ Տօքթօր Կլօվըրը կանչէ, սակայն վեր թող չի գայ մինչև որ կանչենք:

ՏԵՂ. — Շա'տ լաւ: (Փախսալով) Գնա՛ Տօքթօրը բեր, ստուերին մէջ կեցէք, մինչև որ կանչեմ Ձեզի: (ՎիՐին) Գնաց:

ՎԻՐ. — Լա՛ւ:

ԱՅՏԱ. — Այնքան յոգնած եմ որ, Վի՛ր:

ՎԻՐ. — Այդպէ՛ս է սիրելիս, քնացի՛ր ուրեմն լուսնկալին տակ, հոն՝ խեղճ աչերդ չեն փնտրուիր:

ՏԵՂ. — Ուրիշ հրաման մ'ունի՛ք:

ՎԻՐ. — Այո՛, բեւօլվէրդ լեցուր:

ՏԵՂ. — Լեցուն է: (Պատշաճ կ'երթայ)

ՎԻՐ. — Լա՛ւ: (Կը մտնէ ՍԱԼ. աջեւ) Շնորհակալութիւն Ձեր գալուն, Փրինսէ՛ս: Կ'ուզեմ հետեւնիդ տեսուել:

ՍԱԼ. — Հրամանեցէ՛ք պարոն:

ՎԻՐ. — Այս օրիորդը Ձեր աղջկը չէ, այնպէս չէ՛:

ՍԱԼ. — Ձէ՛, պարոն:

ՎԻՐ. — Անգղիացի օրիորդ մըն է, չէ՛:

ՍԱԼ. — Անգղիացի ի ծնէ . . . այո՛ . . .

ՎԻՐ. — Իսկ դաստիարակութեամբ:

ՍԱԼ. — Մասամբ:

ՎԻՐ. — Ո՛հ, Տիկի՛ն, խնդրեմ հաճեցէք . . .

ՍԱԼ. — Ինչպէ՛ս:

ՎԻՐ. — Այո՛, հաճիլ . արդէօք դիպուածով, ատենօք մէկը կորսնցուցի՛ք Ձեր կեանքին մէջ . եղբայր մը . զաւա՛կ մը . . .

ՍԱԼ. — (Կը նստի) Զաւա՛կ: Ո՛հ, Աստուած իմ, այս ձայնը արդէօք ո՛ւր լսեցի առաջ . . .

ՎԻՐ. — Ձեր կեանքին մէջ, ատենօք, կ'ըսեմ . քանզի ամէնքս ալ ունեցած ենք կորսուած իտէալներ . մոռցուած յոյսեր . մեր անմրմունջ, նուիրական յիշատակարաններ:

ՍԱԼ. — Լո՛ւէ՛, կը յիշեմ, չուտ, կամացուկ մը ըսէ, դուք տտենօք տիկնոջ մը հետ չի խօսեցա՞ք ծեր տոքթօրին տունը, Շէլքօմ, Անգղիա . տիկին մը որ շատ մը հարցումներ ըրած էր Ձեզի:

ՎԻՐ. — Կը խոստովանեմ . ես ա՛ն եմ . բժիշկ չեմ ես . ես լոկ իր սիրելին փնտռող սիրահար մըն եմ: Ո՛հ Տիկին, չէ՛ի կրնար իմ կողմս դասել Ձեզ . վայրկեան մը սեպեցէք թէ կորսուած եղբայր մըն եմ, նոյնիսկ որդի՛ մը, որմէ բաժնուած կրնաք ըլլալ . այս խորհուրդը չփնտսեր Ձեզի և կրնայ ինծի օգնել համոզել Ձեզ . . .

ՍԱԼ. — Ձէք գիտեր ինչ խօսածնիդ և նոյն ատեն համակրական լարի մը կը զարնէք, որ ճշմարիտ ըլլալու է . ըսէ՛ ինծի . վայրկեանները սուղ են: Մայրդ կը ճանչնաս, տեսա՞՞մ ես երբէք:

ՎԻՐ. — Երբէ՛ք . երբէ՛ք . անոր համար է որ կը սիրեմ պիտեալ թէ՛ դուք որ իբր մայր գտնուեցա՞ք սիրելիս, կրնաք այժմ նոյնիսկ ինծի ալ կարկառել Ձեր մարդասիրութիւնը: Տօքթօրը ամէն ինչ պատմեց ինծի . կը հասկնամ ամօթս սակայն . . .



ՍԱԼ.— Ահ, այդպէս է . և այդպէս էր . երբ քեզի խօսեցայ Անդղիա . ձայնդ ինչո՞ւ հրապուրեց զիս : Ինչո՞ւ այնքան սաստիկ յուզուած էի կամքէս դուրս : Վստահ եմ որ . ըսէ՛ ինծի . ամբողջ եղեւ լուծիւնը պատմեց Տոքթոր քեզի :

ՎԻՐ.— Ափսո՞ս, այո՛ :

ՍԱԼ.— Ես . քու . անզգամ . մայրդ եմ :

ՎԻՐ.— Դուք մայրս, Տիկին, Ո՛հ, երանի՛ թէ .

ՍԱԼ.— Այդպէս է . սակայն պիտի ուղղեմ այս սխալը . վատնելու ատեն չ'ունինք . հաւատացէ՛ք . հաւատացէ՛ք միայն . քաւութիւնը կը հասնի վերջապէս . ի՞նչ կ'ուզէք . . .

ՎԻՐ.— Այտան փախցնելու օգնեցէք մեզի :

ՍԱԼ.— Սակայն պայմանագրուած է Թատրոնի տնօրէնին հետ . կեցի՛ք . Մարքիզը, այո՛, այո՛ կը տեսնեմ . հոս նայէ . Բազա Օթրանթօ գնա՛ . Մարքիզ Բարամպան տեսնել պահանջէ, սա մատնին իւրեն տուր . իմին հին հարսանեկան մատնիս է . չի պիտի հասկնայ թէ տարբեր է . և «Այտա» ըսէ, ինչ որ տայ առ հոս բեր :

ՎԻՐ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

ՍԱԼ.— Ըրէ՛ք ինչ որ կ'ըսեմ, Աստուծոյ սիրոյն, չուտ եղիր, այս կերպով սիրելիդ պիտի վերստանաս զաւակս . գնա՛ . կ'երջնում որ ո՛չ քեզի ոչ ալ անոր սուտ կը խօսիմ :

ՎԻՐ.— Պիտի երթամ . տո՛ւր մատնին :

ՍԱԼ.— Այնպէս կարգադրէ որ հոն հասնելուդ պէս հոս ալ պատգամաւոր մը պիտի գայ պատշգամին, մատնին ետ պիտի բերէ ու «Բարամպա» ըսէ :

ՎԻՐ.— Բայց մատնին Մարքիզը պիտի առնէ :

ՍԱԼ.— Դուք չպիտի պահէ . եթէ քովը պահէ իր պատգամաւորը նախ չկրնար առնել Այտան . որովհետեւ Փրինսի կողմէ Այտայի կորստեան ու կործանմանը համար կարգադրուած նշանը այդ է :

ՎԻՐ.— Կարևորութիւն չ'ունի . ուէ մասնի մը կրնայ ըլլալ կարծեմ . սակայն ետ ի՞նչ պիտի բերեմ :

ՍԱԼ.— Թատրոնի տնօրէնութեան ազատագիրը պիտի բերես Այտայի համար . այս կերպով Սպանիա-ական օրէնքը չպիտի կրնայ գրաւել զինք . և չորս 100,000 բեզեդայի վաճառագինը . որու փոխարէն Փրինս ծախելու վրայ էր Այտան :

ՎԻՐ.— Իրե՞ն պիտի բերուին :

ՍԱԼ.— Այո՛, լա՛ւ է այդպէս . յետոյ լուիկ պիտի կարգադրէ յանձնումը և վերջը կրնաս դուն ալ թուղթը Թատրոնի տնօրէնին յանձնել տալու միջոցները ձեռք առնել :

ՎԻՐ.— Ո՛հ, կարծեմ բարեկամ մը պիտի հաճի ընել այդ բանը : Շնորհակալ եմ, մայրի՛կ, հազար, հազար անգամ :

ՍԱԼ.— Վախճամ, ալ պիտի չկրնամ տեսնել քեզ ՎԻՐ : Նայի՛մ աչքերուդ : Ո՛հ, Աստուած իմ . գնա՛ գնա՛ . անվեհեր ըլլալու եմ : Պիտի ազատի . երբէ՛ք մի վախճար :

ՎԻՐ.— Կը խոստանա՞ք :

ՍԱԼ.— Ամբողջ արիւնիս գնովը, պիտի պաշտպանեմ զինք քեզի համար, ՎԻՐ : Գնա՛, չուտ եղիր : (Կ'երթան ՎԻՐ եւ Տեղ. Ուս.)

ՍԱԼ.— Զաւակս, պայծառ դէմք . փայլուն աչքեր . պարկեշտ սիրտ . . . Հաւատարիմ պիտի գըտնուիմ քեզի . հին հարսանեկան մատնիովս գնեցի սիրելիդ . ուրախ եմ որ պահած եմ մինչև հիմա :

Կը մեկնէ Փրինս աջէն

ՓՐԻՆՍ. — Ի՞նչ կ'ըսէ բժիշկը :

ՍԱԼ.— Դեղ մը բերելու գնաց, որ կը յուսայ թէ բուժէ հիւանդութիւնը :

ՓՐԻՆՍ.— Յոգնած ըլլալու էք . գիշերը անհանգիստ էիք : Շուտով փախչելու ենք այս տեղէն, այդ Անգլիացիները գտան մեզ :



ՍԱԼ.— Այո՛ :

ՓՐԻՆՍ.— Աւելի լաւ է առ այժմ Սպանիական օրէնքով պաշտպանուած սպանիական տուն մը փոխադրել զինք, մինչև որ հետքը կորսնցնեն կրկին : Մարքիզ Բարամպա առնել կ'ուզէ զինք :

ՍԱԼ.— Այո՛, առ ոչինչ :

ՓՐԻՆՍ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք :

ՍԱԼ.— Առ ոչինչ :

ՓՐԻՆՍ.— Ինծի ունեցած բարեկամութեանը փոխարէն :

ՍԱԼ.— Ո՛հ, այո . . . : Մէկը կայ պատշգամին վրայ . Ո՞վ է :

ՓՐԻՆՍ.— Տեսնեմ (Զայն) «Փրինս Բիբրիանի . Բարամպա» :

ՓՐԻՆՍ.— (Թուղթերը գրպանելով) Ահ, այո՛, Բարամպա խօսքին տէրն է : Մարդ զրկած է Այտան առնելու համար . . . : Անգղիացի Տոքթորը կրնայ այցելել զինք Բազա Օթրանթոյի մէջ :

ՍԱԼ.— Եթէ աւելի ապահով կը կարծես . . .

ՓՐԻՆՍ.— Կը հաճի՞ք օգնել : Բնացած է : Ժամանակ մի կորսնցնէք . կարելի է որ վանտօմ գայ :

Կը մտնէ Վանտօմ աջէն

ՎԱՆՏ.— (Պատշգամին կը մտնէ վազելով) Հո՛ս է : Ի՞նչ է այդ Անթօնիօ :

ՓՐԻՆՍ.— Ոչինչ, ոչինչ :

ՎԱՆՏ.— Թատրոնի տնօրէնը ինծի ըսաւ թէ Այտայի յանձնառութիւնը ջնջած է Մարքիզ Բարամպայի վճարած 100,000 բեզելային փոխարէն :

ՓՐԻՆՍ.— Բժիշկը յանձնարարեց :

ՎԱՆՏ.— Ստախօս . բժիշկը չի յանձնարարեց . կը խաբես զիտ, Անթօնիօ . . . : Ի՞նչ էին ճիշդ հիմա քեզի տրուած թուղթերը : Ո՞վ է վարը ըստ պատշգամի վրայ :

Այսա կը տեսնուի ձախակողմի դռնէն :

ՓՐԻՆՍ.— Ասո՛ր համար եկած է . (Այսան պատշգամ բշտելով) Ահաւասիկ, առէ՛ք : (Կը մտնէ Պրեկն)

ՊՐԵԿՆ.— Սիրո՞վ, հա՛, հա՛ :

ԱՅՏԱ.— Ո՛հ, ձեր Հեռօսկէս . ձեր Պրե՛նտ :

ձեր եղբայրս :

ՓՐԻՆՍ.— Մատուցի՛ւն կայ գործին մէջ :

ՎԱՆՏ.— Կարծեմ լա՛ւ տեսակէն (Պատռեանիւն առջեւ կ'երթայ) :

ՊՐԵԿՆ.— Արդ՝ պարոններ, հանգիստ կեցէք . այսօր պատրաստ եմ . զէնքի հարկ չիկայ, եթէ կը հաճիք, քանզի սպաննելու յարմար վիճակ մ'ունիմ բարկութենէս կու.այի . ու այս բանը խիստ կը կատաղեցնէ զիս . առանց ժամանակ անցնելու կը նախընտրեմ ձեր երկուքն ալ գնդակահարել : Ահա՛, հոս է, Տէ՛ր իմ (Կը մտնէ Տր. Կյովր, ձախէն : Պրեկն ցեպի Տր. կը տանի Այտան) :

ՏՐ. Կ.— Ո՛հ, զաւա՛կս փոքրիկս . չե՛ս ճանչնար զիս :

ԱՅՏԱ — Սինեօր . Սինեօրն է : Կեցի՛ր խորհիմ . մե՛ծ էր հրդեհը :

ՏՐ. Կ.— Հրդեհ չկա՛ր :

ԱՅՏԱ.— Կը քնանայի : Ո՛ւր ենք :

ՏՐ. Կ.— Պարսկոնա կը գտնուինք, անո՛ւշս . եկու՛ր երթանք այստեղէն . եկու՛ր երթանք :

ՎԱՆՏ.— Չպիտի երթա՛ք : (մօտենալով) :

ՏՐ. Կ.— Ժամբայ բաց, Պրե՛նտ : (ՏՐ. Կ. Այտայի հետ ձգուելով) :

ՊՐԵԿՆ.— (ՏՐ. ի ետեւէն ձախակողմ կ'անցնի) Ժամբան բաց է, տէ՛ր իմ Հիմա . սրիկա՛յ . (մեկդի կը վանէ Վանտօմ . ձախակողմի դռնէն կ'անցնի ՏՐ.՝ Այտայի հետ . կը մտնէ Տեղ. Ուս. հանդարտ . ստուերին մէջ կը տեսնուին երկու ուսիկաներ) :

ՎԱՆՏ.— Ո՛ւր է բժիշկը :

ՏԵՂ.— Շատ չ'անցած կուգայ . Փրինս Բիբրիանի . արթնցի՛ր . բանդ ձախողեցաւ . ես Աւստրիական Ոստիկանն եմ . . .

ՓՐԻՆՍ.— Ի՞նչ :

ՎԱՆՏ.— Հօ՛, հօ՛ :

ՏԵՂ.— Այո՛, զիս բանտարկեցիք Աւստրիական պանդոկը . վերարկուէն սիկարներ հրամցուցիք . կ'ուզէ՛ք սիկար մը տամ, մինչ այս գործը կարգադրենք :



ՓրիւնՍ.— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

Տեղ.— Ըսել կ'ուզեմ թէ՛ լա՛ւ կ'ընէք եթէ՛ ձեր գրպանները պարպէք . հոն գտնուող մէկ թուղթը կ'ուզեմ:

ՓրիւնՍ.— Թուղթ չ'ուշիմ:

Տեղ.— Օրիորդ Այտայի Թատրոնի յանձնառու-  
թիւնը ջնջող թուղթը: Տո՛ւր ինձի:

ՓրիւնՍ.— Չ'ուշիմ:

ՍԱԼ.— (Գրպանէն քաշելով) Այո՛, ուշի՛մ . . .  
ահաւատի՛կ . (վրան կը խուժե . Փրիւնս կը քանայ  
արգիլել):

ՍԱԼ.— Չէ՛, ետ կեցի՛ր . պէ՛տք է դարձա-  
նուի այս սխալը:

ՓրիւնՍ.— Չպիտի՛ տաս ( պայտար . կը հանե  
դաշոյնը . կը դաշունահարե . ՍԱԼ. կ'իյնայ):

Տեղ.— Յանցանքներուդ ոճրագործութի՛ւն ալ  
աւելցուցիր:

ՊրիւնՍ.— Որ առաջարկէին դահիճը կ'ըլլայի:

Տեղ.— Բեզի համար պատրաստ էի ես , սակայն  
աւոր համար , ո՛չ . : Ա՛ռ բանտարկէ . (ոստիկանը  
կը ջանի Փրիւնսը ձախեմ) . (Վանճ . ի) Գնա՛ կորի՛ր:

ՎԱՆՏ.— Բայց խեղճ Փրիւնսէ՛սը:

Տեղ.— Ես կը հոգամ:

Կը մտնեն Վիր , Այտա եւ Տր . ձախեմ:

ՎԱՆՏ.— Անթո՛նիօ , փորձակչիւղը սպասելու  
ատեն կ'ուշենաս . Մօն ամի , ատիեէօ: (կը մեկնի)

ՍԱԼ.— Զաւա՛կս , դաւա՛կս . խնդրեցէք Տոք-  
թորէն որ ներէ ինձի:

ՎԻՐ.— Սինեօ՛ր , ներեցէ՛ք:

ԱՅՏԱ.— Այո , միշտ ազնիւ գտնուեցաւ հետս:

ՍԱԼ.— Հին հարսանեկան մատնիո՛վս վերադնե-  
ցի Այտան . խնդրեցէք Տոքթորէն որ ներէ ինձի:

ՏՐ. Կ.— Կը ներեմ:

ՍԱԼ.— Աստուա՛ծ օրհնէ քեզ , ազնի՛ւ ոգի .  
գլուխս , Վի՛ր . վերցո՛ւր կամաց մը . ըսէ՛, (Մայ-  
րիկ , Աստուա՛ծ օրհնէ քեզ):

ՎԻՐ.— Աստուա՛ծ օրհնէ քեզ , սիրելի մայրիկ .

ՍԱԼ.— Փա՛ռք Աստուծոյ: (կը մեռնի):

ՊԱՏԿԵՐ

(Վարդգուր Միքիէլ լամբրէն)

| Էջ | Տող | Վերայակք            | Ուղղակի                                   |
|----|-----|---------------------|-------------------------------------------|
| 8  |     | «Ինձինք»ին աւելցնել | ՍՈՒՎԻՏՐՈՒ<br>ՏԻԻՔԼՈՍ                      |
| 10 | 6   | Եթէ չեմ             | Եթէ չէք կրնար<br>կռահել չեմ               |
| 10 | 34  | Տեղա-ըման           | տեղադրում                                 |
| 11 | 2   | Կը մտնէ Վիր         | Կը մտնէ Վիր յան-<br>կարծ պատահա-<br>նեմ): |
| 18 | 21  | Երբէք ,             | Երբէք:                                    |
| 19 | 26  | Կը սխալիս           | Կը սխալիմ                                 |
| 20 | 20  | Թողատրեց            | Կը թողատրէր                               |
| 21 | 32  | դրամատունէ          | դրամատունն է՝                             |
| 22 | 6   | նեւս                | նեւս                                      |
| 23 | 1   | մը                  | մը:                                       |
| 24 | 3   | որպէսզի             | որպէսզի . . .                             |
| 24 | 9   | աւելի:              | աւելի . . .                               |
| 24 | 26  | վերը                | Վերը                                      |
| 24 | 30  | սիրահարին ,         | սիրահարին:                                |
| 24 | 31  | Կոյր ,              | Կոյր                                      |
| 27 | 19  | կը համբուրեմ ,      | կը համբուրեմ                              |
| 30 | 34  | անտարակոյս:         | վարդերդ ,<br>անտարակոյս . . .             |
| 33 | 8   | ըսել :              | ըսել .                                    |
| 33 | 29  | վերջէն              | վերջին                                    |
| 42 | 10  | դուգաղիպեր          | դուգաղիպիր                                |
| 46 | 28  | կարծեմ              | կարծեմ ,                                  |
| 52 | 6   | Հոս է:              | Հոս է:                                    |
| 52 | 26  | Թիրաւի , այդ        | Թիրաւի , բայց այդ                         |
| 53 | 21  | Տիկինն              | Տիկինն                                    |
| 53 | 25  | ՍԱԼ.                | ՎԻՐ .                                     |
| 53 | 26  | Ճշմարիտ             | Վի՛ր                                      |
| 54 | 27  | Ես                  | Եւ                                        |
| 55 | 6   | Իրեն                | ձեզի                                      |
| 60 | 19  | ՍԱԼ.— (             | (ՍԱԼ .                                    |
| 60 | 33  | Լոնտոնէ             | Լոնտոնէ՞                                  |
| 61 | 19  | գանձիկէս            | գանձիկիս                                  |
| 63 | 7   | տառփալից            | տառփալից                                  |



**ԹԱՐԳՄԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՆԵՐԻ ԵՐԿԵՐԸ**

- 1.— Բառարան Անգղ. ոճերու և ասացուածքներու
- 2.— Լէոնարտա, թոր. 4 արարով. Պեկորասոն



**Թարգմանչին հասցէն.—**

Փօսթարկի թիւ 536. ԻՉՄԻՐ

---

**ԳԻՆ 15 ՂՐՈՒՇ**





ՀՀ Ազգային գրադարան



NL0171444



